

18926

Գ. ԳՐՅՈՒՆՎԱԼԴ

# Մ Ո Պ Ր Ը

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ  
ՊԱՅՔԱՐՈՒՄ

327.3

Գ-98

ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1937

15 JAN 2010  
27 SEP 2006

327-3  
4-98

Գ. ԳՐՅՈՒՆՎԱԼԴ

# Մ Ո Պ Ր Ը

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ  
ՊԱՅՔԱՐՈՒՄ

10486

ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1987

12.7 MAR 2013

18926



715  
37

### ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՅԵՎ ՍՊԻՏԱԿ ՏԵՌՈՐԸ

«Պատերազմը կարող է բռնկել անսպասելի կերպով...» — ասաց ընկեր Ստալինը ամերիկական մամուլի ներկայացուցիչ Ռոյ Հոուարդի հետ ունեցած զրույցում 1936 թվի մարտի 1-ին: Նոր համաշխարհային հրդեհի, նոր իմպերիալիստական պատերազմի բռնկման վտանգը շատ մեծ է: Իմպերիալիստները տենդոտ կերպով զինվում են: Գիչեր-ցերեկ աշխատում են ռազմական դործարանները, բորսաներում անընդհատ բարձրանում է ռազմական ձեռնարկությունների ակցիաների գինը:

Մի շարք յերկրների կառավարությունների գլուխն են կանգնած Փաշիստները, պատերազմի բացահայտ հրձիգները: Տեական ձգնաժամը խիստ սրել է պայքարն իմպերիալիստների բանակի ներսում: Գերմանական Փաշիզմը ցինիկական բացահայտությամբ պատերազմի յե պատրաստվում: Հիտլերյան Փաշիզմը Գերմանիայի ամբողջ տնտեսությունն ի սպաս է դրել իմպերիալիստական նոր պատերազմ, հատկապես Սորհրդային Միության դեմ ուղղված պատերազմ պատրաստելու դործին:

Կոմինտերնի 7-րդ կոնգրեսն այսպես բնորոշեց գերմանական Փաշիզմի դերը. «գերմանական Փաշիզմը հանդիսանում է իմպերիալիստական նոր պատե-

յազմի գլխավոր հրձիգը և հանդես է դալիս իբրև  
վիչագգային հակահեղափոխութեան հարվածային բը-  
նուևցի»:

Հիտլերյան կառավարութունն ընդհանուր զինվո-  
րական ծառայութիւնն է մտցրել և մեծացրել է բա-  
նակի կազմը, ընդարձակել է ուղանավատորմը և տան-  
կային գումարտակները: Ֆաշիստական Գերմանիան  
Լոկառնոյի պայմանագիրը վերածեց թղթի մի կտորի  
և 1936 թվի մարտի 7-ին զորք մտցրեց ապառազմա-  
կանացված Հռենոսյան մարզը:

Ծանր թնդանութիւնների և գնդացրային ջոկատների  
զղերը Հիտլերի գրաված մարզերում, ժամանակա-  
կից ռազմական անբողոքներն ուղանալերի իրենց  
ստորերկրյա սրահներով, բետոնապատված պահեստ-  
ներով և բենզինի պահեստարաններով— ակնհայտու-  
բէն վկայում են այն մասին, վոր Հիտլերը ձգտում  
է իրագործել պատերազմի իր քաղաքականութիւնը,  
վոր նա ազդարարել էր «Իմ պայքարը» գրքում: Այդ  
գրքում նա Գերմանիան կոչում է «տարածութիւն  
չունեցող ժողովուրդ», վոր պետք է նվաճի նոր յեր-  
կրներ: «Իմ պայքարը» գրքում Հիտլերը գրում է.

«Յայց յերբ մենք ներկայումս խոսում ենք նոր  
հողերի մասին Յեվրոպայում, ապա մենք կարող ենք  
առաջին հերթին նկատի ունենալ միայն Ռուսաստա-  
նը և նրա իշխանութեան տակ գտնվող ծայրերկրային  
պետութիւնները: Ծակատագիրն ինքն է ասես մատ-  
նանշում այդ ուղին»:

Գերմանական բանակը ներկայումս զգալիորեն ա-  
վելի ուժեղ է, քան 1914 թվին, համաշխարհային իմ-

պերիալիստական պատերազմի սկզբին: Այն ժամանակ  
գերմանական բանակի թիվը հասնում էր 800.000 հո-  
գու: Ներկայումս նա առնվազն յեռապատկվել է և հաշ-  
վում է վոչ պակաս, քան 2.900.000 հոգի ըստ գեր-  
մանական Ֆաշիստների պաշտոնական տվյալների.  
այստեղ մտնում են պահնորդական վոստիկանութեան  
ջոկատները, ռազմականացված Ֆաշիստական կազ-  
մավորումները, գրոհային (CA) և պահնորդական  
(CC) ջոկատները, տեխնիկական շտապ ուղնութիւ-  
նը:

Սրա վրա պետք է ավելացնել նաև աշխատանքա-  
յին ճամբարներում ռազմական ուսուցում անց-  
կենող յերիտասարդութիւնը (ռազմական ուսուցումն  
աշխատանքային ճամբարներում հարկադրական կար-  
գով ընդգրկում է ամբողջ յերիտասարդութեանը):

Ֆաշիստական ռազմական տեսաբանները, դալիք  
պատերազմը կոչում են «համապարփակ պատերազմ»  
(„Totaler Krieg“):

Ֆաշիստները ձգտում են պատերազմի պատրաստ-  
ման գործի մեջ քաշել ամբողջ ազգանակչութեանը.  
Հիտլերյան Ֆաշիզմի պատերազմական պատրաստու-  
թիւնների հետ ձեռք-ձեռքի յե ընթանում չտեսնված  
չովինիստական պրոպագանդը ազգարնակչութեան մեջ  
և ռասայական ուժեղ հալածանքը՝ գերմանական ժո-  
ղովրդին վոգեվորելու և ռազմական նոր հաշիչով հա-  
մակելու նպատակով:

Յերկրում տարածվող աշխարհազրական քարտեղ-  
ները պատկերացնում են մեծացած Գերմանիան (grös-  
seres Deutschland): Նրա մեջ մտցվում են  
Ավստրիան, Զվիցերիան, Զեխոսլովակիայի մի մասը,

րազմի գլխավոր հրճիչը և հանդես և գալիս իբրև  
«իջազգային հակահեղափոխութեան հարվածային բը-  
ռուկցի»:

Հիտլերյան կառավարութիւնն ընդհանուր զինվո-  
րական ծառայութիւն և մտցրել և մեծացրել և բա-  
նակի կազմը, ընդարձակել և ողանաւատորմը և տան-  
կային գումարտակները: Ֆաշիստական Գերմանիան  
Լոկառնոյի պայմանագիրը վերածեց թղթի մի կտորի  
և 1936 թվի մարտի 7-ին զորք մացրեց ապառազմա-  
կանացված Հռենոսյան մարզը:

Ծանր թնդանութիւնների և զնդացրային ջոկատների  
զղիւրդը Հիտլերի գրաված մարզերում, ժամանակա-  
կից ռազմական անբարեբաններն ողանալերի իրենց  
ստորերկրյա սրահներով, բետոնապատված պահեստ-  
ներով և բենզինի պահեստարաններով — ակնհայտու-  
բեն վկայում են այն մասին, վոր Հիտլերը ձգտում  
է իրազործել պատերազմի իր քաղաքականութիւնը,  
վոր նա ազգարարել էր «Ռմ պայքարը» դրքում: Այդ  
դրքում նա Գերմանիան կոչում է «տարածութիւն  
չունեցող ժողովուրդ», վոր պետք է նվաճի նոր յեր-  
կրներ: «Ռմ պայքարը» դրքում Հիտլերը դրում է.

«Քայց յերը մենք ներկայումս խոսում ենք նոր  
հողերի մասին Յելվոպայում, ապա մենք կարող ենք  
առաջին հերթին նկատի ունենալ միայն Ռուսաստա-  
նը և նրա իշխանութիւն տակ գտնվող ծայրերկրային  
պետութիւնները: Ճակատագիրն ինքն է ասես մատ-  
նանշում այդ ուղին»:

Գերմանական բանակը ներկայումս զգալիորեն ա-  
վելի ուժեղ է, քան 1914 թվին, համաշխարհային իմ-

պերիալիստական պատերազմի սկզբին: Այն ժամանակ  
գերմանական բանակի թիվը հասնում էր 800.000 հո-  
գու: Ներկայումս նա առնվազն յեռասպակովել է և հաշ-  
վում է վոչ պակաս, քան 2.900.000 հոգի ըստ գեր-  
մանական Ֆաշիստների պաշտոնական տվյալների.  
այստեղ մտնում են պահնորդական վոստիկանութիւն  
ջոկատները, ռազմականացված Ֆաշիստական կազ-  
մավորումները, դրոհային (CA) և պահնորդական  
(CC) ջոկատները, տեխնիկական շտապ ողնութիւ-  
նը:

Սրա վրա պետք է ավելացնել նաև աշխատանքա-  
յին ճամբարներում ռազմական ուսուցում անց-  
կենող յերիտասարդութիւնը (ռազմական ուսուցումն  
աշխատանքային ճամբարներում հարկադրական կար-  
գով ընդգրկում է ամբողջ յերիտասարդութիւնը):

Ճաշխատական ռազմական տեսաբանները, դալիք  
պատերազմը կոչում են «համապարփակ պատերազմ»  
(„Totaler Krieg“):

Պաշխտները ձգտում են պատերազմի պատրաստ-  
ման գործի մեջ քաշել ամբողջ ազգանակչութիւնը.  
Հիտլերյան Ֆաշիզմի պատերազմական պատրաստու-  
թիւնների հետ ձեռք-ձեռքի յե ընթանում չտեսնված  
չովիինիստական պրոպագանդը ազգաբնակչութիւն մեջ  
և ռասայական ուժեղ հալածանքը՝ գերմանական ժո-  
ղովրդին վոգեվորելու և ռազմական նոր հաշիչով հա-  
մակելու նպատակով:

Յերկրում տարածվող աշխարհադրական քարտեղ-  
ները պատկերացնում են մեծացած Գերմանիան (grös-  
seres Deutschland): Նրա մեջ մտցվում են  
Ալստրիան, Զվիցերիան, Զեխոսլովակիայի մի մասը,

Լեհական Սլիեզիան, Դանցինգը, Հոլանդիան, Դանիան,  
Շվեդիան, Ելզաս-Լոթարինգիան, Եյսլեն-Մարմեդիկ:

Գերմանական Փաշիզմը սպառնում է իր քր յեր-  
կըրները և ժողովուրդները անկախութեանը:

Գերմանական Փաշիստական գործակալները տեն-  
դոս կերպով աշխատում են Գերմանիայի սահմանա-  
կից յերկրներում և Բալկաններում, ստեղծելով Փա-  
շիստական միութիւններ, վորոնք համակրում են  
այդ յերկրները միացմանը Հիտլերյան Գերմանիա-  
յին:

Պայքարը նոր դադութների համար, աշխարհի նոր  
վերաբաժանման համար, պայքարը Խորհրդային  
Միութեան դեմ հանդիսանում է Հիտլերյան Փաշիզմի  
գլխավոր նպատակը:

«Գերմանական Փաշիստները ավանտյուրիստական  
պլանները չափազանց հեռու յեն տարածվում և ուղ-  
մական ուննչ նկատի ունեն, Ֆրանսիայի դեմ, նրանք  
նկատի ունեն Չեխոսլովակիայի բաժանումը: Այստ-  
րիայի աննեքսիան, Մերձբալթյան յերկրները ինքնու-  
րույնութեան վոնչնացումը, յերկրները, վորը նրանք  
ձգտում են պրացդարմ դարձնել Խորհրդային Միու-  
թեան վրա հարձակվելու, Խորհրդային Ուկրաինայի  
անջատումը ԽՍՀՄ-ից: Նրանք իրենց համար դա-  
յութներ են պահանջում, ձգտելով տրամադրութիւն-  
ներ բորբոքել հողուտ համաշխարհային պատերազմի՝  
ուշխարհի նոր վերաբաժանման համար»<sup>\*)</sup>: Այսպես է

<sup>\*)</sup> Գոմինտերնի VII կոնգրեսի բանաձեւերը, Կոնսերաս  
1935 թ. Եջ 26, 27:

բնորոշում Կոմինտերնի 7-րդ կոնգրեսը Հիտլերյան  
կառավարութեան ուղմական նպատակները:

Պատերազմական վտանգի մյուս ողջախը գտնվում  
է Հեռավոր Արևելքում: Ճապոնական զինվորականու-  
թիւնը տենդոս կերպով զինվում է: Գրեթէ ամեն  
որ մամուլում հաղորդագրութիւններ են յերևում  
այն մասին, վոր Ճապոն-մանջուրական շոկատները  
հարձակվում են Մոնղոլական ժողովրդական հանրա-  
պետութեան և մեր սոցիալիստական հայրենիքի տե-  
բիտորիայի վրա: Ճապոնական զորքերն այլեւի ոչ ա-  
վելի խորն են թափանցում Չինաստան: Մանջուրիայի  
աննեքսիային հետեց Հյուսիսային-չինական մար-  
զերի գրավումը: Ճապոնական իմպերիալիզմը կա-  
ռուցել է դեպի խորհրդային սահմանները տանող  
ստրատեգիական նոր ճանապարհներ: Վերջին դու-  
մարման ճապոնական պարլամենտը 48 միլիոն իեն<sup>\*)</sup>  
հատկացրեց ողանավատորմի վերակազմութեան հա-  
մար: ՉիՖույոյում, Կորեայում և Ֆորմոզա կղզում նոր  
բազաններ են ստեղծված ողանավատորմի համար:

Իտալական Փաշիստներն արյունահեղ, բնաջնջող  
պատերազմ մղեցին հարեչական ժողովրդի դեմ: Ան-  
պաշտպան քաղաքներն ու բազիկոմիցին և հողին հա-  
վասարվեցին: Հարեչստանի խորը թիկունքը թափան-  
ցած հզոր ուժերով վիթխարի տարածութիւններ  
թունավորեցին թունավոր դադերով և բազմաթիվ հըր-  
վեհներ առաջացրին դյուղերում և հիվանդանոցնե-  
րում:

<sup>\*)</sup> 1 յենը մոտ 1ու 50 կ. է:

Իմպերիալիստներն ուժեղացնում են ռազմամթերքի արտադրութեանը, ստրատեգիական նոր ճանապարհներ են կառուցում, ողանալատորմերի համար բազաներ են ստեղծում և այլն:

Իմպերիալիստական յերկրներում թիկունքի պատրաստութիւնն է կատարվում միաժամանակ: Հուսալի թիկունքը յուրաքանչյուր պատերազմում հանդիսանում է պատերազմող պետութեան դլխավոր հենարանը: Առաջվա պատերազմներում ել բոլոր միջոցները ձեռք եյին առնվում պարենի և ռազմամթերքի անխափան մատակարարումով բանակն ապահովող հուսալի թիկունք ստեղծելու համար: Առանց այդպիսի հուսալի թիկունքի՝ պատերազմ վարել անհնար է:

Հատուկ նշանակութիւնն է ստանում ազգաբնակչութեան իրենորգիական մշակումը, ռազմական պրոպագանդը, ազգաբնակչութեան մեջ շովինիստական զգացմունքները հրահրելը, սպիտակ տեռորի ողնութեամբ բանվոր դասակարգին սանձահարելը:

Կուսակցութեան 17-րդ համագումարում ընկեր Ստալինն ասաց. «Շովինիզմը և պատերազմի պատրաստումը, վորպես արտաքին քաղաքականութեան հիմնական տարրեր, բանվոր դասակարգի սանձահարումը և տեռորը ներքին քաղաքականութեան բնագավառում, վորոքես անհրաժեշտ միջոց ապագա ռազմաճակատների ամրացման համար, — ահա թե ինչն է առանձնապես զբաղեցնում այժմ ժամանակակից իմպերիալիստական քաղաքագետներին»<sup>\*)</sup>:

<sup>\*)</sup> Ընկեր Ստալինի հաշվետու զեկուցումը ՀամԿ(բ)Կ XVII համագումարում: Սղագրական հաշվետուութիւն, Կուսհրատ, 1934թ. եջ 11:

Անողորմ սպիտակ տեռորի ողնութեամբ իմպերիալիստները ձգտում են դեռ «խաղաղ ժամանակ» ջախջախել և բնաջնջել այն բոլոր ուժերը, վորոնք դեմ են դուրս գալիս պատերազմին: Ահա թե ինչո՛ւ սպիտակ տեռորն առանձին կատաղութեամբ հարձակվում է իմպերիալիստական պատերազմի ամենահետեւողական հակաուկորդներին՝ կոմունիստական կուսակցութեանն իր վրա: Ահա թե ինչո՛ւ իմպերիալիստական բուրժուազիան ձգտում է տեռորի ողնութեամբ ջախջախել բոլոր բանվորական կազմակերպութեաններին և վորջնացնել պրոլետարիատի առաջնորդներին: Ահա թե ինչո՛ւ նոր պատերազմի ամենակտիվ պատրաստման եպոխտում «... Փաշիզմը դարձել է ներկայումս ամենամոդայական ապրանքը բուրժուական մարտնչող քաղաքագետների մեջ» (Ստալին)<sup>\*)</sup>:

Փաստերը վկայում են այն մասին, վոր սպիտակ տեռորն առավելագույն ուժեղութեամբ մոլեգնում է վորջ աշխատավոր ազգաբնակչութեան դեմ հենց այն յերկրներում, վորոնք պատերազմի հրձիգներն են, — Գերմանիայում, Ճապոնիայում և նրա գաղութներում, Փաշիստական Իտալիայում, վորն իր տիրապետութեանն է հաստատել Հարեշտանում հարեչական ժողովրդի դեմ արյունոտ, գիշատիչ պատերազմ մղելու ճանապարհով:

Սպիտակ տեռորը պատերազմի քանապարհ է մաքրում և հանդիսանում է իմպերիալիստական պատերազմի պատրաստման յեղանակներից, միջոցներից մեկը:

<sup>\*)</sup> Նույն տեղում:

## ՄՊԻՏԱԿ ՏԵՌՈՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՅՅԱՆ ՄԻՋՈՑ Ե

Ֆաշիստական Գերմանիայում սպիտակ տեռորը պատերազմի ինտենսիվ պատրաստութեան առնչութեամբ ավելի ու ավելի սանձարձակ և անողոր ձևեր է ստանում: Զինվորական ծառայութեան մտցնելու ժամանակից նորանոր տասնյակ հազարավոր հեղափոխական բանվորներ, գյուղացիներ, ինտելիգենցիայի և միջին խավերի ներկայացուցիչներ Ֆաշիստների կողմից յենթարկվում են փորձութունների և ծեծի, նրանցից շատերը տարվում ու նետվում են տաժանակիր աշխատանքի և համակենտրոնացման ճամբարները, շատերը դադանաբար սպանվում են:

Գերմանական ռայխսվերն ապառազմականացված մարզերը մտնելուց առաջ ձերբակալվեցին հազարավոր բանվորներ հակաֆաշիզմի կասկածով (հատկապես պաշտպանութեան դժով աշխատողներին): Հիշեցնենք (28-ի մասսայական դատավարութեանը Վուլպերտալում: Մեղադրյալների մեծ մասը վերցված եր պաշտպանութեան դժով աշխատող ձեռնարկութուններում՝ ըխմիական, մետաղաձուլման և արհեստական մետաքսի ձեռնարկութուններում աշխատողներին: Դեռևս նախաքննութեան ժամանակ 11 հակաֆաշիստ մեղադրյալներ սպանվեցին. դրանք էին՝ Գիլբերտտը, Երեխտը, Կրամերը, Կրեմերը, Կրեյնկենրաուվը, Մեր-

տինը, Մուտը, Պիկարը, Շեֆֆելը. Շտեյնը և Վատերմանը: Այդ դատավարութեանը, այդ դատաստանը ռայխսվերնի զորքերն ապառազմականացված մարզը մտցնելու նախապատրաստումն էին:

Արհեստակցականորեն կազմակերպված 628 բանվորների Վուլպերտալյան մասսայական դատավարութեան իմաստը ամբողջ ֆաշիստական Գերմանիայում կատարված բազմաթիվ մասսայական ձերբակալութունների նշանակութեանը բաց է արված գերմանական Ֆաշիստական «Անգրիֆ» թերթի 1936 թ. մարտի 8-ի առաջնորդող հոդվածում: Այդ հոդվածում ի միջի այլոց ասված է.

«Միթե մենք, վորպես միամիտ յերագողներ, անպաշտպան կթողնենք մեր ըմբիական գործարանները Լեյբեռլուգենում, Գեխտում, Ելբերֆելդում, (Վուլպերտալ), պայթուցիկ նյութերի մեր նոր, ժամանակակից գործարանները, — այս ամենը, վոր կենսականորեն անհրաժեշտ, անփոխարինելի յե վոչ միայն մեր զորքերի, այլև մեր անվտանգութեան համար»:

Ֆաշիստական մամուլը պարզ կերպով ցույց է տվել, վոր մասսայական դատավարութեաններն ու մասսայական ձերբակալութեանները ծառայում են ռազմական արտադրութեան «ապահովելու» համար, կոչված են վորպես «պաշտպանութեան» ծառայել ֆաշիստական Գերմանիայի պատերազմական ուժեղ պատրաստութեանների համար: Դրանումն է նրանց նպատակը: Այդ նույն նպատակի համար է ստեղծված նաև



Համակենտրոնացման ճամբարները ցանցը, վոր ձգվում է Գերմանիայում արևելքից արևմուտք և հյուսիսից հարավ, վորն ապահովում է թիկունքի «անհուսալի» տարրերի մեկուսացումը:

Վերջին շարաթներս ամբողջ Գերմանիայում տեղի ունեցան նոր մասսայական ձերբակալություններ: Կազմակերպված են նոր մասսայական դատավարություններ բազմաթիվ ձեռնարկությունների բանվորների և ծառայողների ամբողջ կազմի դեմ Համբուրգում, Շտուտգարդում, Յետցում և Գերմանիայի ուրիշ քաղաքներում, նրանց մեղադրելով հակաֆաշիզմի մեջ: Այդպիսի դատավարությունների ճանապարհով հիտլերյան ռազմական քաղաքականությունն աշխատում է ձեռնարկություններից մաքրել և արմատախիլ անել բոլոր նրանց, ովքեր ձգտում են խաղաղության պահպանմանը:

Դասակարգային պայքարին մասնակցելը Գերմանիայում դիտվում է վորպես պետական դավաճանություն և հաճախ պատժվում է մահապատժով: Բանվորների ամբողջ խմբեր նստենում յեղած Կրուպի գործարաններից բռնված են «լրտեսություն» կասկածով: Վոչ վոք չգիտե, թե նրանք ո՛ւր անհետացան: Հարադատներին արդելում են տեղեկանալ, թե վորտե՞ղ են գտնվում նրանց ամուսիններն ու վորդիները:

Այս բոլոր փաստերը դալիս են ասելու, վոր ինչքան ավելի յե դերմանական ֆաշիզմը մոտենում իր նպատակին— նոր պատերազմին, այնքան ավելի անողոք է դառնում տեռորը, վոր նա թափում է դերմանական բանվոր դասակարգի գլխին:

Ճապոնական իմպերիալիզմն ուժեղացրել է հայածանքը «Վտանգավոր մտքերի» դեմ: Որենքի հիման վրա կատաղաբար հալածում են վոչ միայն կոմունիստներին, այլև բոլոր նրանց, ովքեր դեմ են տրամադրված գիշատիչ պատերազմին: «Վտանգավոր մտքերի» դեմ ուղղված որենքի առաջին պարագրաֆը մահապատիժ կամ ցմահ տաժանակիր աշխատանք է նախատեսում այնպիսի կազմակերպության պատկանելու համար, վորը ցանկանում է դավաճանել ազգային քաղաքականությունը: Ձինվորական որենսդրելի 36-րդ պարագրաֆը մահապատիժ է նախատեսում բանակում հակապատերազմական սրտպաղանդ մղելու համար:

«Վտանգավոր մտքերի» վերաբերյալ որենքի հիման վրա Ճապոնիայում ամեն ոք ձերբակալվում են 500 հոգի: Ըստ պաշտոնական տվյալների, ճապոնական բանտերում 1935 թվի մարտի 15-ին հաշվվում էր «Վտանգավոր մտքերի» կասկածով ձերբակալված 23—24 հազար աշխատավոր: Բանակում զինվորների ամենափոքր յելույթը պատերազմի դեմ անխնա ճընշվում է սպաների կողմից տեռորի, բռնավարությունների և մահակի կարգապահություն ունություններ:

Խիստ հսկողություն է հաստատված ճապոնական զինվորների՝ ազգաբնակչության հետ ունեցած հարաբերությունների վրա: Ձինվորների նամակադրությունը հարադատների հետ գտնվում է վերահսկողության տակ: Հարադատների այցելություն ժամանակ զրույցը թույլ է տրվում միայն սպաների ներկայությամբ:

Ռազմական գործարաններում շարունակ բանվորների ձերբակալություններ են կատարվում հակապատերազմական պրոպագանդի համար: Բանվորների գործադուլային պայքարն անդիտրեն ճնշում են վոստիկանական ջոկատների և Փաշխտական բանդաների ոգնությամբ:

Սպիտակ տեռորն ե՛լ ավելի անողոք և սանձարձակ կերպով է մոլեգնում ճապոնական զաղութներում և դրավված մարդերում— Ֆորմոզա կղզում, Կորեայում, Հարավային ծովի կղզիներում, Կվանտունյան թերակղզում և հատկապես Մանջուրիայում և Հյուսիսային Չինաստանում: Այստեղ ռազմա-Փաշխտական ճապոնիայի պատերազմական պատրաստության անբաժան մասն են կազմում մասսայական ձերբակալությունները, պատժիչ արշավախմբերը, ամբողջ գյուղերի և մարդերի ավերումը:

Ճապոնական իշխանությունները Մանջուրիայի ազգաբնակչությանն ամենասոսկալի փորձությունների յեն յենթարկում, վորպեսզի ճնշեն ճապոնական զինվորականության հաստատած ռեժիմին ցույց տրվող ամեն մի դիմադրություն: Ձերբակալվածներին կախ են տալիս մատներից ու վոտքերից և ծեծում են մըտրակներով, աղբերի միջև յերկաթյա զնդակներ են խրում, միզանցքի մեջ խողի մազ են մտցնում, պղպեղաջուր են լցնում քիթը, դանդաղ այրում են խարույկի վրա մինչև մահանալը: Մասսայական տանջալի մահապատիժներն ամենորյա յերևույթ են հանդիսանում Մանջուրիայում և Հյուսիսային Չինաստանի

մարդերում, վորոնք ոկուպացիայի յեն յենթարկված ճապոնական զորքերի կողմից:



Խորհրդային Միությանը սահմանակից պետություններում սպիտակ տեռորն արանձնապես անողոք է, վորովհետև պատերազմի Փաշխտական հրձիգներն առանձնապես աշխատում են «անխտանգ» դարձնել այդ մարդերը և այնտեղ ջախջախել ազգաբնակչության ամեն մի դիմադրութիւնը ռազմական պլաններին:

Վերցնենք, որինակ, Լեհաստանը: Վարչավայում և Լվովում աշխատավորների վրա բացված կրակոցները ցույց տվին ամբողջ աշխարհին ռազմական տեռորը, վորն որեց-որ ուժեղանում է Լեհաստանում: Խորհրդային Միությանը սահմանակից Լեհական մարդերում, Արևմտյան Բելոռուսիայում և Արևմտյան Ուկրայինայում, փազտորեն պաշարողական դրություն է տիրում: Պատժիչ արշավախմբերը տեղական ազգաբնակչության դեմ, զնդակահարությունների, բռնությունների, փորձությունների ուղեկցությամբ, համատարած յերևույթ են դարձել: Այսպես կոչված «ձայրերկրները» (Արևմտյան Բելոռուսիայի և Արևմտյան Ուկրայինայի) բնակիչները, բանտարկության ժամկետը լրացնելուց հետո, արտաքսվում են հայրենի մտրղից. նրանց ուղարկում են մեծ մասամբ Լեհաստանի արևմտյան սահմանադրուխը (Պոմերանիա, Պոզնան): Արտաքսվածներն իրավունք չունեն ուրիշ տեղ ապրելու: Նրանք իրավունք չունեն

Թողնել իրենց բնակավայրը նույնիսկ աշխատանք  
փնտռելու համար: Արտաքսվածների գլխավոր մաս-  
տան կազմում են բելոռուս և ուկրալինացի գյուղացի-  
ները ԽՍՀՄ-ին սահմանակից մարզերից:

Այսպես, Գ. գյուղացին, մեկ հեկտար հողի «սե-  
փականատեր», քաղաքական դործունեություն հա-  
մար չորս և կես տարի բանտ նստեց հայրենի գյուղից  
հեռու, Լեհաստանի մյուս ծայրում: Տուն վերադառ-  
նալով, նա հրաման ստացավ արտաքսվելու մասին:  
Անգուցիս հրամանը կատարելուց հրաժարվելու համար  
նա նորից ձերբակալվեց իր 14 և 16 տարեկան վոր-  
դինների հետ միասին: Գյուղացուն աքսորվալը ու-  
ղարկեցին, ուր նա, աշխատանք չունենալով, տառա-  
ցիորեն սովամահ և լինում: Սա մեկն է միայն շատ  
դեպքերից: Այսպիսի ճանապարհով լեհական Փաշիգմբ  
հույս ունի իր ծայրերիցները դարձնել «հուսալի թի-  
կունք» և «պատերազմի պիտանի»:



Արևելյան Աֆրիկայում ծագած պատերազմի ա-  
ռնչուլթյամբ Փաշխատական տեղորն Իտալիայում  
անհավատալիորեն սրվեց: Ամբողջ իտալական ժողո-  
վուրդը տառապում է իտալո-հարեչական պատերազ-  
մից: Զինվորական և արտակարգ դատարանները մո-  
լեզնում են պատերազմի հակառակորդների դեմ:

Ձեռնարկություններն Իտալիայում ուղղակիանաց-  
ված են: Այն զինվորներին, վորոնք հրաժարվում ե-  
լին ճակատ դնալ, դնդակահարում ելին: Ազգային

փոքրամասնությունները շրջաններում, առանձնապես  
Վենետիկ-Ջուլիա նահանգում և Տիրոլում, արտա-  
կարգ դրություն և մտցված:

Հաճախ ծագող անկարգություններն ու աշխա-  
տավորների յերլութները պատերազմի դեմ անողոք  
կերպով ձնչվում են:

1936 թվի փետրվարի 2-ին անկարգություններ  
ծաղեցին իտալական «Կոնտե Վերդե» շոգենավի վրա,  
վորը 3000 զինվոր եր փոխադրում պատերազմական  
դործողությունների արևելյան-աֆրիկյան ճակատը:  
Ընդ վորում 40 զինվոր դնդակահարվեցին սալաների  
ձեռքով, նրանց դիակները ծով նետվեցին:

12 իտալացի զինվոր ճակատում, հրաժարվելով  
տանկի վրա նստել, դնդակահարվեցին: Տրիեստում  
ուսանող Վիտչիչն ու բժիշկ Կաստելլիչը ձեռքակալվե-  
ցին և սպանիչ կլիմա ունեցող կղզիներն աքսորվեցին  
«արտասահման մեկնելու դիտավորության» համար:  
Տասնյոթ տարեկան ուսանող՝ Բիշիչիկցի Վիցելը 5  
տարվա աքսորի դատապարտվեց սլովենական յերդ  
յերգելու համար:

Բավենագոյի յերկու զինվոր, ցանկանալով հրա-  
ժեշտ տալ իրենց ընտանիքներին Հարեչտան մեկնե-  
լուց առաջ և դրան թույլտվություն չունենալով,  
ձերբակալվեցին: Սպաները նրանց այն աստիճան ձե-  
ծեցին, վոր հարկ յեղավ նրանց հիվանդանոց ուղար-  
կել:

Միլանում տրամվայի հիսնամյա մի վերահսկիչ  
ձերբակալվեց այն բանի համար, վոր ասել եր, թե  
«պատերազմը յերկար և ծանր կլինի»: Հոռոմում բան-

715  
ԼԵ



վոր Տարիցերը գնդակահարվեց գործարանների ռազմականացման վերաբերյալ որենքի հիման վրա «չենթարկվելու համար»:

Պաշտույնում Տրոյլո անունով մի աղջիկ Փաշխատական մի մեծ տոնի առթիվ իր փեսացույին հետևյալն էր գրել. «Ավելի լավ է վաղը գնանք քաղաքից դուրս գրոսնեյու, քան թե մնանք քաղաքում և դիմահահանդեսը դիտենք»: Մի քանի օրից հետո նրա ամբողջ ընտանիքը ձերբակալվեց: Վերջի վերջ՝ աղջկա ծնողներն ազատ արձակվեցին, բայց նա ինքը կղզիներն աքսորվեց:

Տուրինում ինտելիգենցիայի 20 հայտնի ներկայացուցիչներ ձերբակալվեցին հակապատերազմական պրոպագանդի կասկածով:

Լիվոռնոյում մեկ անգամից ձերբակալվեցին 132 հոգի. նրանց մեղադրում էին այն բանում, վոր մասնակցել են քաղաքական կալանավորների ոգտին կատարված հանդանակությանը:

Այսպիսի օրինակներ, վորոնք վկայում են Իտալիայում ամբողջ աշխատավոր ժողովրդի դեմ մոլեգնող ռազմական տեռորի ուժգնության մասին, կարելի չէ հաղարներով բերել:



Մենք միայն մի քանի օրինակներ բերեցինք մի քանի յերկրից: Այս օրինակները ցայտուն կերպով ցույց են տալիս, թե ինչպե՛ս պատերազմի պատ-

րաստման առնչությամբ ուժեղանում է սպիտակ տեռորը, ինչպե՛ս սպիտակ տեռորը պատերազմի հրճիչներին համար դառնում է պատերազմի դեմ ապստամբող մասսաներին ճնշելու գլխավոր միջոցներից մեկը, այն գլխավոր միջոցներից մեկը, վորոնք կոչված են բուրժուազիայի աչքին ապահովել թիկունքը պատերազմ պատրաստելու և ապագա պատերազմական գործողությունների համար: Սպիտակ տեռորը տեղում է վոչ միայն հեղափոխականների դիմին, այլև հանդես է դալիս ընդդեմ աշխատավորների լայն մասսաների, ընդդեմ բանվորների և գյուղացիների: Վերջին ժամանակներս հայտնի դարձած փաստերը հաստատում են այն գերբավորման ճշտությունը, վոր ընդունեց Միջազգային կարմիր ողնության 1-ին համաշխարհային կոնգրեսը 1932 թ. նոյեմբերին պատերազմի և սպիտակ տեռորի միջև յեղած սերտ կապի մասին.

«Աշխարհի սկսված նոր վերաբաժանման և իմպերիալիստների կողմից հակախորհրդային ինտերվենցիայի տենդոտ պատրաստման պայմաններում ըսպիտակ տեռորը դառնում է իմպերիալիստական պատերազմի դեմ և խորհրդային Միության պաշտպանությամբ հանդես յեկող հեղափոխական աշխատավորական մասսաների հետ դատաստան տեսնելու կարեւորագույն միջոցներից մեկը»:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶ- ՄԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅԲԱՐՈՒՄ

Սպիտակ տեռորի փաստերն ու թվերը խոսում են պերճախոս լեզվով: Նրանք ազդանշում են նոր սպանդի վիթխարի վտանգը. նրանք վկայում են այն մասին, վոր պատերազմի հրձիգները փորձում են հրեշտային միջոցներով ջախջախել Ժողովրդական լայն մասսաների աճող դիմադրությունը պատերազմի հանդեպ, փորձում են ջախջախել պատերազմական պատրաստությունների և պատերազմական պրովոկացիաների դեմ ուղղված պայքարի ամրապնդվող միասնական ճակատը:

Դրա համար ել պայքարը սպիտակ տեռորի դեմ, հալածվող հակաֆաշիստների և պատերազմի դեմ մարտնչողների պաշտպանությունն սպառնացող իմպերիալիստական պատերազմի դեմ մղվող պայքարի մի մասն են հանդիսանում:

Միջազգային կարմիր ողնությունը դնալով ավելի ու ավելի յե վերաճում բոլոր քաղաքական ուղղությունների աշխատավորների մասսային ընդգրկող կազմակերպություն: Կարմիր ողնությունը բոլոր աշխարհամասերում իր ունեցած 72 սեկցիաներով դարձել է պատերազմի դեմ ուղղված համաշխարհային շարժման հզոր մի դործոն: Նրա ամբողջ գործունեությունը սերտորեն շաղկապված է պատերազմի դեմ

մղվող պայքարի հետ, քանի վոր նա պայքարում է պատերազմի ճանապարհը հարթող սպիտակ տեռորի դեմ, նա ոգնում է սպիտակ տեռորի զոհերին— հակապատերազմական պայքարի զոհերին: Կարմիր ողնության առաջին համաշխարհային կոնգրեսն իր բոլոր սեկցիաների առջև դրեց պատերազմի դեմ պայքարելու խնդիրը: Այդ կոնգրեսում միջազգային դրուժյան և Միջազգային կարմիր ողնության խնդիրների մասին իր աված ղեկուցման մեջ ընկ Անդրե Մարտին ասաց հետևյալը.

«Մի՞թե մեր կարմիր ողնությունը պատերազմի դեմ պայքարի պիտի մղի «Մենք դեմ ենք պատերազմին» լողունգը մեխանիկորեն կրկնելու ճանապարհով, մեխանիկորեն կրկնելով այն, ինչ մյուս կազմակերպություններն են ասում: Վո՛չ: Մենք այդ պայքարը կմղենք նախ և առաջ պատերազմի դեմ պայքարելու համար հալածվող հեղափոխականներին պաշտպանելու ճանապարհով, նրանց իրոք պաշտպանելու ճանապարհով, այսինքն նրանց հալածանքի խեղճան պատճառները մասսայականացնելու ողնությամբ, ինչպես նաև հոգատար և լուրջ աջակցություն ցույց տալով այն զինվորներին և նավազներին, վորոնք պատրժվում են իմպերիալիստական պատերազմի դեմ յեղույթ ունենալու համար»:

Միջազգային կարմիր ողնության առաջին համաշխարհային կոնգրեսն իր բոլոր սեկցիաներին խնդիր առաջադրեց՝ «լայնորեն ծավալել սպիտացիան և պատերազմի դեմ մղվող պայքարում տուժած բոլոր հեղափոխականների պաշտպանության հատուկ կամպա-

նիան, ոգնություն կազմակերպել այն զինվորների և նախազինների նկատմամբ, վորոնք հալածանքների յեն յեն թարկվում հակամիլիտարիստական աշխատանքի համար, մասսայական յեռանդուն պայքար մղել ռազմա-դաշտային դատարանների, զինվորական ատյանների և հատուկ որենքների դեմ, վորոնք լրտեսության դեմ պայքարելու պատրվակով ուղղված են հեղափոխական և հակաիմպերիալիստական ազխտացիայի դեմ»:

Կատարելով այս վորոշումը, Միջազգային կարմիր ոգնության սեկցիաները վիթխարի աշխատանք կատարեցին, վորը հնարավորություն տվեց մահից ազատել հարյուրավոր և հազարավոր հալածվող հակապատերազմական մարտիկների:

## ԿԱՐՄԻՐ ՈԳՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻԱՆԱԿԱՆ ՃԱԿԱՏՆ ԸՆԴԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՈՒ ՖԱՇԻԶՄԻ

Արդեն իսկ իր առաջացման շրջանում Միջազգային կարմիր ոգնությունը միջազգային լայն կամպոսիաներ ծավալեց, վորոնք իրագործում եյին հակաիմպերիալիստական ընդդեմ իմպերիալիստական պատերազմի պատրաստման: Այդպես եր 1923 թվին Գերմանիայում, յերբ սաշնակիցները գրավեցին Ռուրի մարզը: Գերմանական պրոլետարիատը գտնվում եր հեղափոխական դարթոնքի վիճակում: Կարմիր ոգնությունն

այն ժամանակ գերմանական հեղափոխականների հետ յեղբայրանալու համար զինվորական դատարանի առաջ կանգնեցված Փրանսիացի զինվորների պաշտպանության լայն կամպոսիա կազմակերպեց: Հետագայում այդպիսի կամպոսիաներ ծավալվեցին Մարոկկոյի և Սիրիայի զաղութային պատերազմների ժամանակ, Կենտրոնական Սմերիկայում ծագած պատերազմների ժամանակ, Չինաստանում իմպերիալիստների կատարած ինտերվենցիայի ժամանակ: Կարմիր ոգնությունը կազմակերպեց 1916 թվից ի վեր բանտում հյուսիսային հակապատերազմական մարտիկ թոմաս Մունիի ազատման կամպոսիան և ուրիշ շատ յերկրներ:

Միջազգային կարմիր ոգնության սեկցիաներն ազգային և միջազգային մասշտաբով բազմաթիվ կամպոսիաներ անցկացրին, աջակցելով այն զինվորներին և նախազիններին, վորոնք հալածվում եյին հեղափոխական աշխատանքի ու պրոպագանդի համար զորանոցներում ու նավերում, կամ իմպերիալիստական բանակներում ու ռազմանավերում բռնկված ապստամբությունից հետո. այդ կամպոսիաներն ոգնեցին նրանցից շատերին ազատելու բանտից կամ փրկելու մահապատժից:

Կարմիր ոգնության սեկցիաները վաղուց ի վեր յեռանդուն պայքար են մղում չովինիզմի և ռասայական ատելության դեմ: Հիշեցնենք տարիներ տևող կամպոսիան լինչի դատաստանի դեմ և Սկոտլանդի պատանիների փրկության համար:

Պայքարը տեղորի, լինչի դատաստանի դեմ և Սկոտլանդի պատանիներին ելեկտրական աթոռից ա-

գատելու համար համակեց ամբողջ աշխարհի աշխատավորներին: Անդլիայում, Հոլանդիայում և Ֆրանսիայում կազմվեցին Սկոտսբորոյի պատանիների պաշտպանութեան կոմիտեներ զանազան կազմակերպութիւնների և հայտնի դործիչներէ մասնակցութեամբ:

Պատանիներից մեկի մայրը՝ Ադա Ռայտը մեկն'ց Յելլոքայ. նա հանդես յեկավ մասսայական ժողովներում Սկոտսբորոյի պատանիների պաշտպանութեամբ, վրոնք դռնվում էին մահապատժի սպառնալիքի տակ. նա խոսեց մամուլի ներկայացուցիչներէ հետ:

Կապիտալիստական յերկրներում, ուր ազգային փոքրամասնութիւններն առանձնապէս ստրկացված են և յենթարկվում են հատուկ հալածանքներէ, ուր պատերազմի պատրաստման շահերից յենելով բուրժուազիան փորձեր է անում ռասայական ու ազգային թշնամանքը հրահրել և ժողովուրդներին իրար դէմ զրգոել, — այդ յերկրներում կարմիր ողնութեան սեկցիաներն ողնութեան յեկան ստրկացված ազգային փոքրամասնութիւններին ու ժողովուրդներին, աջակցութիւն ցույց տալով զոհերին և մերկացնելով ազգային հալածանքի հակահեղափոխական բնույթը: Կարմիր ողնութեան աշխատողներն՝ աշխատավորական մասսաներին ցույց տվին, վոր ռասայական ատելութիւնն ու ազգային փոքրամասնութիւնների հետապնդումը պատկանում են պատերազմի պատրաստման միջոցների թվին և կոչված են ծառայել սեփական շահերի պաշտպանութիւնից մասսաներին կտրելու:

Համար: Կարմիր ողնութեան աշխատողները աշխատավորական մասսաներին ցույց եյին տալիս, վոր ռասայական հալածանքն ու ազգային փոքրամասնութիւններէ հետապնդումները բուրժուազիայի դիտավորութեամբ պետք է չովնիստական տրամադրութիւններ յերևան հանեն ազգաբնակչութեան մեջ, տրամադրութիւն առաջացնեն իմպերիալիստական ռազմական նպատակների ոգտին:

Կարմիր ողնութեան բոլոր միջազգային և ազգային կամպանիաները ծառայում են լայն մասսաներին դաստիարակելու պրոլետարական ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների միջազգային համերաշխութեան փողով: Այսպիսով, նրանք բոլորը հակապատերազմական պայքարի մի մասն են հանդիսանում:

Վերցնենք, սրինակ, ընկ. ընկ. Երնստ Թելմանի, Ռակոչիի, Մերենդորֆի և Ռսեցկու փրկութեան կամպանիաները: Այդ կամպանիաները վերածվեցին այնպիսի յելուցթիների, վորոնք ընդգրկում էին վոչ միայն կարմիր ողնութեան կազմակերպութիւններին և կոմունիստական կուսակցութիւններին, այլև բոլոր յերկրների ու աշխարհամասերի բոլոր հակաֆաշիստներին: Ընկ. Երնստ Թելմանի ազատման, ընկ. Ռակոչիի ազատման համար մղվող պայքարի դրոշի տակ միանում են իսղաղութեան և աղատութեան բոլոր բարեկամները: Հանդուցյալ մեծ գրող Անրի Բարբուսը, վորը ժողովուրդների սպանդի ժամանակ գրեց իր հակապատերազմական մեծ դիրքը՝ «Կրակում», հայտարարել էր.

«Պայքարը Թեւմանի համար— պայքար է Փաշիզմի և պատերազմի դեմ»:

Կոմիւնտերնի դործկոմի նախագահութեան անդամ Ֆրից Հեկկերտի մահից առաջ արտասանած խոսքերը հետևյալներն են լին.

«Պայքարը խաղաղութեան համար— պայքար է Երեսուցի Թեւմանի ազատութեան համար»:

Այդ պայքարն ամենատարբեր ձևերն է ընդունում: Այդ ձևերից մեկն է հանդիսանում Կարմիր ոգնութեան կողմից հակապատերազմական յերուցթները կազմակերպումը գերմանական ռազմանավերն ոտար նախահանդիստները դալու առթիւ: Այսպես, գերմանական «Շլեզվիգ-Հոլշտայն» ռազմանավի Ամբատերդամում կատարած այցելութեան առթիւ Կարմիր ոգնութեան աշխատողները նախահանդեսում ամբացրին տրանսպարանտներ՝ հակապատերազմական լողունգներով և ընկ. Թեւմանի պաշտպանութեան լողունգներով:

Փաշիստական ռազմանավի մոտ կանգնած շողենավերից մեկում նրանք «Խնտերնացիոնալ»-ի հաղորդում կազմակերպեցին բարձրախօսի միջոցով: Խճմբական ճառերով զխմեցին գերմանական նախազներին: Գերմանական նախազներին բաժանակցի առերեւոյթ անվնաս լուցկու տուխեր, վորոնց մեջ նրանք դտան պատերազմի դեմ ուղղված և ընկ. Թեւմանի ազատութեան ոգտին խոսող մանիֆեստներ:

Գերմանական շողենավերի դալու առթիւ նույնպիսի յերուցթներ կազմակերպեցին կարմիր ոգնութեան ակտիվիստները նաև ուրիշ յերկրներում— Պոր-

տուալիայում, Մեքսիկայում, ԱՄՆ-ում և Կանադայում:

Պատերազմական պատրաստութիւնների դեմ ուղղված պայքար է հանդիսանում նաև պայքարն ընկ. Ռակոչիի ազատութեան համար Հունգարիայում, ընկ. Մնտիկույենները՝ Ֆինլանդիայում, ընկ. Իցիկավայները՝ Ճապոնիայում, իտալական Փաշիզմի բանտերում հյււժովող ընկ. ընկ. Գրամշինին ու Տերրաչինիները, քաջարի Լուի Կարլոս Պրեստեսինը՝ Բրազիլիայում և պայքարը վտարանդի հակաֆաշիստների հալածանքները դեմ:

Ամեն մի պայքար Փաշիզմի դեմ պայքար է պատերազմի սպառնալիքի դեմ, քանի վոր Փաշիզմը պատերազմի ճանապարհ է հարթում: Այդ պայքարին դործոն կերպով մասնակցելը կարմիր ոգնութեան բոլոր սեկցիաների և բոլոր անդամների ամենորայ խընդերն է հանդիսանում կապիտալի և դադութային լատերկութեան յերկրներում:

Կարմիր ոգնութեան սեկցիաների մասնակցութիւնը Փաշիզմի դեմ ուղղված ընդհանուր շարժմանը արտահայտվել է նաև ազգային ու միջազգային մասշտաբի հակապատերազմական և հակաֆաշիստական կոնգրեսներին նրանց բերած մասնակցութեամբ:

Կարմիր ոգնութեան պատգամավորները հանդես յեկան իմպերիալիստական պատերազմի դեմ ուղղված համաշխարհային կոնգրեսում 1932 թվին Ամստերդամում, պատերազմի դեմ ուղղված համաշխարհային ոչտտանեկական կոնգրեսում 1933 թվին Փարիզում, Շանհայի նախապատերազմական կոնգրեսում (1933 թ.



սեպտեմբեր), համաշխարհային ուսանողական կոնգրեսում 1934 թվին Բրյուսելում, պատերազմի և Փաշիզմի դեմ ուղղված կանանց միջազգային կոնգրեսում 1934 թվին Փարիզում:

Մոնտեպիդեոյի հակապատերազմական կոնգրեսում Արգենտինայի, Ուրուգվայի, Ջիլիի և Բրազիլիայի կարմիր ուղնության սեկցիաները ներկայացված էին 42 պատգամավորով: Այդ բոլոր կոնգրեսներում, վորոնք բացառիկ նշանակություն ունեյին հակապատերազմական շարժման զարգացման համար, Կարմիր ուղնությունը պատգամավորներին հայթայթել էր հատուկ նյութ, վորը սրում էր ուշադրությունը պատերազմի ուղին հարթող տեւորի նկատմամբ և մատնանշում էր Փաշիստական ռազմական կամայականության զոհերի ազատության համար մղվող միջազգային պայքարն ուժեղացնելու անհրաժեշտությունը:

Մի ամբողջ շարք յերկրներում, հատկապես Յւրանսիայում և Իսպանիայում, պայքարը պատերազմի և Փաշիզմի դեմ հանդէս է ժողովրդական լայն ճակատի ստեղծման: Ժողովրդական ճակատը Ֆրանսիայում փակեց Փաշիզմի ճանապարհը և վերածվեց պատերազմի դեմ ուղղված ժողովրդական հզոր մի շարժման: Ժողովրդական ճակատը Ֆրանսիայում խաչորազույն հաջողություններ ձեռք բերեց և կարողացավ իշխանության գլուխը կանգնեցնել այնպիսի մի կառավարություն, վորը կատարում է միասնական ժողովրդական ճակատի պահանջները:

Իսպանիայում ժողովրդական ճակատին հաջողվեց ապալել Փաշիզմին համակրող կառավարությանը,

հաջողվեց ուժեղ հարված հասցնել Փաշիզմին և ազատել 30.000 հակաՓաշիստ կալանավորներին:

Կարմիր ուղնության աշխատողները մասնակցում են ժողովրդական ճակատի բոլոր ցույցերին և մանկ-Ֆեստացիաներին, հանդես գալով Փաշիստական տեւորի զոհերի հետ միջազգային համերաշխության լույսնայներով: Այդ ցույցերում հանդես են գալիս Կարմիր ուղնության հոետորները: Իսպանիայում, ինչպես և Ֆրանսիայում, Կարմիր ուղնության լողունները, ինչպես, որինակ, բոլոր քաղաքական կալանավորներին ներումն շնորհելու լողունը, դառնում են ամբողջ ժողովրդական ճակատի լողուններ: Այդ լողունը դարձավ ժողովրդական ճակատի ընտրական ծրագրի պահանջը:

Իսպանիայում այս լողունըն այնչաան խորն էր թափանցում մասսաների ղետակցության մեջ, վոր մասսաները շարժվեցին դեպի բանտերը և ազատ արձակեցին կալանավոր հակաՓաշիստներին:

Հակապատերազմական կալանավորված մարտիկներին պաշտպանությունը վաղուց ի վեր Կարմիր ուղնության խնդիրն է հանդիսացել բոլոր յերկրներում: Այսպես, որինակ, Ռումինիայում վերջին ժամանակներս Կարմիր ուղնության ակտիվիստները կարողացան նվաճել ամենալայն ժողովրդական մասսաներին հակապատերազմական կալանավորված մարտիկներին պաշտպանության դործի համար: Այդ առանձնապես հստակ դրսեվորվեց Ռումինիայի հակապատերազմական կոմիտեյի ղեկավար, կապիտալիստական դասակարգային արդարադատության կողմից հալածվող

պրոֆեսոր Կոնստանտինեոկույի (Կասսայի) համար մղվող պայքարում, ինչպես նաև պատերազմի դեմ մարտնչող քաջարի Աննա Պաուկերի պաշտպանութանը նվիրված յերևութում: Փետրվարի 29-ին ընկ. Պաուկերը — հակապատերազմական այդ ակտիվ մարտիկը — 19 ուրիշ հակաֆաշիստների հետ կանգնեց ղինվորական դատարանի առաջ:

«Վորսե՞ղ եք ապրում», — հարցրեց նրան հարցաքննութան սկզբում դատարանի նախագահը.

Նրա պատասխանը կարճ երև հստակ.

«Արդեն 8 ամիս ե, ինչ ապրում եմ Վակառեչտիի բանտում. ձերբակալվել և վրատիկանութան կողմից վերջ եմ ստացել այն պատճառով, Վոր պայքարել եմ խաղաղութան և ռումինական ժողովրդի բարիքի համար»:

Ի պաշտպանութուն այդ քաջարի կնոջ՝ Ռումելիայի կարմիր ուղնութունը մոբիլիզացիայի յենթարկեց ազգաբնակչութան ամենալայն շրջաններին: Հարյուրից ավելի փաստաբաններ յերկրի բոլոր ծայրերից հայտարարեցին, Վոր ցանկանում են պաշտպանել պատերազմի և Ֆաշիզմի դեմ մարտնչող այդ կնոջ: Մոտ 2000 վկաներ հայտարարեցին, Վոր ցանկանում են ցուցմանը տալ դատաւարութան ժամանակ: Գրեթե ամեն ոք Ռումինիայի բուրժուա-դեմոկրատական թերթերը յերկրի բոլոր ծայրերից յեկած բողոքներ եյին տպագրում բանվորների, ծառայողների, գյուղացիների, ինտելիգենտների և ղիտնականների ստորագրութուններ: Արտասահմանում նույնպես հուժկու շարժում ծավալեց Աննա Պաուկերի ազատութան

ազատին: Վոչ միայն տարբեր ուղղությունների հակաֆաշիստական կազմակերպությունները, այլ նույնիսկ, որինակ, հանրապետական սպաների միությունը Ֆրանսիայում դրավոր պահանջեց ազատել Աննա Պաուկերին:



Տեևորը և հալածանքները չեն կարող խանդարել կարմիր ուղնութան ակտիվիստներին աշխատելու պատերազմի և Ֆաշիզմի դեմ պայքարող կալանավորված մարտիկների ազատութան համար: Նրանք մոբիլիզացիայի յեն յենթարկում ազգաբնակչութան ամենալայն շրջաններին, նրանք ուղնում են հզոր ժողովրդական ճակատը կոփել պատերազմի և Ֆաշիզմի դեմ, պատերազմի ճանապարհ հարթող սպիտակ տեղերի դեմ:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՆՁԻՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Հարավային Ամերիկայում Պարագվայի և Բոլիվիայի միջև Չակոյի մարդի ամենահարուստ նավթահանքերի համար բնուկված յեռամյա պատերազմի ժամանակ ցայտուն կերպով դրսևվորվեց պայքարը պատերազմի դեմ, Վոր կազմակերպել եր Արդենտինա-

յի կարմիր ոգնությունը: Կարմիր ոգնության Ար-  
դենատինյան սեկցիայի կենտրոնական կոմիտեն  
վերջրեց Պարազվայի շեֆությունը, Բուենոս-Այրես  
քաղաքի կարմիր ոգնության կազմակերպությունը  
վերջրեց Բոլիվիայի շեֆությունը: Բոլոր միջոցնե-  
րով աջակցել յերկու յերկրներում կազմակերպելու  
այնպիսի կարմիր ոգնություն, վարն ընդունակ լինի  
սգնության դալ հակապատերազմական մարտիկներին  
դեմ ուղղված սպիտակ տեռորի ու պատերազմի դոճե-  
րին, այդպիսի նպատակ էր առաջադրել իրեն այդ  
կազմակերպությունը:

Ստեղծված էր հատուկ հանձնաժողով, վորի առ-  
ջև խնդիր էր դրված կապ հաստատել յերկու յեր-  
կրներին միջև կալանավորներին և նրանց ընտանիքնե-  
րի միջոցով, ինչպես նաև կապ Պարազվայի և Բոլի-  
վիայի փախստականների միջև: Հանձնաժողովը հա-  
տուկ ուշադրություն նվիրեց սահմանամերձ շրջան-  
ներում կարմիր ոգնության խմբեր կազմակերպելուն,  
այն հաշվով, վոր այդպիսի ճանապարհով կապ ըս-  
տեղծվեր յերկրի ներսում յեղած դոճերի հետ: Հան-  
գանակության միջոցով մեծ գումարներ հավաքվեցին:  
Շուտով հաջողվեց կապ հաստատել Պարազվայի հա-  
կապատերազմական կալանավորված մարտիկներին  
հետ, և այդպիսով հիմք ստեղծվեց այդ յերկրում  
կարմիր ոգնության սեկցիա կազմակերպելու համար:  
Արգենտինայի կարմիր ոգնությունը հակապատերազ-  
մական նյութեր հրատարակեց հնդիկներին լեզվով և  
մորիլիդացիայի յենթարկելով հնդիկ մասսաներին,  
զգալիորեն ուժեղացրեց հակապատերազմական պայ-

քարը և բարեկալեց այդ սլաքարի դոճերին ոգնելու  
դորժը: Բոլիվիայում աշխատանքը նույնպես լավ ար-  
դունքներ տվեց:

1933 թվին «Դե Զեվեն Պրովինսիեն» կրեյսերի  
վրա Նիդերլանդական Հնդկաստանում ինդոնեզ և հո-  
լանդացի նավաստիների ապստամբություն բռնկվեց:  
Ապստամբության ճնշումից հետո, վորի ըն-  
թացքում 23 ապստամբ նավաստիներ սպանվեցին, կա-  
տաղի հալածանք սկսվեց ձերբակալվածներին դեմ:  
Հոլանդական բուրժուական մամուլը նրանց համար  
մահապատիժ էր պահանջում: Հոլանդիայի կարմիր  
ոգնության անդամների աջակցությամբ մյուս յեր-  
կրներում անմիջապես ծավալվեց ձերբակալվածներին  
պաշտպանության լայն կամպանիան: Կառավարությա-  
նը ուղարկվեցին բողոքի բնագմաթիվ պատվիրակու-  
թյուններ, բողոքի հարյուրավոր բանաձևեր ուղարկ-  
վեցին զինվորական աստանին: Հոլանդիայում ստեղծ-  
վեց Ազատագրման միջազգային կոմիտե հեղափոխա-  
կան կազմակերպությունների ներկայացուցիչների և  
ականավոր դործիչների գլխավորությամբ: Այդ յե-  
լույթների ճնշման ներքո զինվորական դատարանը  
չհամարձակվեց մահվան դատաւճիռ հանել նավաստի-  
ների նկատմամբ:

1932 թվին Պերույում խռովություն բռնկվեց  
«Գրաու» և «Բոլոնյեն» ռազմանավերի վրա, այնտեղ  
տիրող աշխատանքի ծանր պայմանների հետևանքով:  
Բուենոս արյան մեջ ճնշվեց և 26 նավաստի դա-  
տապարտվեցին ընդհանուր առմամբ 325 տարվա տա-

Ժանակիր աշխատանքների: Պերույի կարմիր ուղնու-  
թյունը, բողոքի և համերաշխության կամպանիա  
ծավալելով, կարողացավ 1934 թվին աղատել տալ նա-  
վաստիներին:



Փաշխտական Բուլղարիան հայտնի յե իր անու-  
ղորմ, սանձարձակ տեղորով՝ ուղղված հեղափոխա-  
կան զինվորների, նավաստիների և հակապատերազ-  
մական մարտիկների դեմ: 95 մահապատժի դատա-  
վճիռ հանվեց 1933 թվի մայիսից մինչև 1935 թվի  
վերջն ընկնող ժամանակամիջոցում: Դեռ նախքան դա-  
տավճիռ հանելը՝ 17 հակամիլիտարիստներ սպանվե-  
ցին, 95-ից 11 դատավճիռ ի կատար ածվեցին: Սպան-  
ված հակամիլիտարիստների մեջ էլ յին բուլղարական  
նավատորմում հակապատերազմական աշխատանք կազ-  
մակերպող կոմյեդիտական Լյուդլիբրոդսկին և զինվոյ՝  
Վոյկովը:

Բուլղարիայի կարմիր ուղնությունը հանդես յե-  
կավ մահվան դատապարտված զինվորների ու նավաս-  
տիների պաշտպանությամբ և մյուս հեղափոխական  
կազմակերպությունների հետ միասին բողոքի և փրկ-  
կության կամպանիա կազմակերպեց: Ընդհատակի  
պայմաններում հաջողվեց ղրավոր բողոքների հա-  
մար հավաքել մի քանի հազար ստորադրություն,  
բողոքի ցույց կազմակերպել Ռուսսայում, թուրքի-  
ներ տարածել և բողոքի պատվիրակություն ուղարկել  
Սոֆիա: Նավահանդիստային Բուլղաս քաղաքում զին-  
վորների դատավարության ժամանակ նյն շենքի վը-  
րա, ուր տեղի յեր ունենում դատավարությունը,  
կարմիր դրոշ բարձրացվեց հետևյալ մակադրու-

թյամբ՝ «Կորչի՛ Փաշխտական զիկտատուրան: Կորչեն  
հեղափոխական զինվորների և նավաստիների դեմ  
ուղղված դատավարությունները»:

Կարմիր ուղնությունը լայն հասարակայնությունը  
մոբիլիզացիայի յենթարկեց նաև միջազգային մասշ-  
տաբով: Բոլոր յերկրներում բուլղարական հյուպատո-  
սություններն էլ յին տեղում ամեն տեսակ կազմակեր-  
պությունների բանաձևերը և մասսայական ժողովնե-  
րի բողոքները: Կարմիր ուղնության կողմից կազմա-  
կերպված ցույցերը սպառնալի պահանջում էլ յին՝  
«Աղատություն բուլղարական հեղափոխական զինվոր-  
ների և նավաստիներին»:

Փարիզում ստեղծված եր «Բուլղարական ժողո-  
վըրդի բարեկամների կոմիտե» տարբեր ուղղություն-  
ների կազմակերպությունների ներկայացուցիչներով:  
Կոմիտեյի յելույթներին միացան արվեստի աշխա-  
տողները, գրանականները, բժիշկները, պրոֆեսոր-  
ները: Կոմիտեն մի քանի անգամ փաստաբաններ ու-  
ղարկեց Բուլղարիա տեղում պաշտպանելու համար մե-  
զադրյալներին, վորոնք դտնվում էլ յին մահապատժի  
սպառնալիքի տակ: Բուլղարիա ուղարկվեց տարբեր  
քաղաքական ուղղությունների ներկայացուցիչներից  
կազմված միջազգային մի պատվիրակություն: Պատ-  
վիրակությանը հանձնարարված եր ամբողջ աշխարհի  
հակաֆաշիստների բողոքը հայտնել դատավարության  
դեմ: Զանազան յերկրներում բողոքի ցույցերը պաշա-  
րում էլ յին բուլղարական հյուպատոսարանները:

Հունաստանում, Եվեդիայում և ԱՄՆ-ում զինվոր-  
ների խմբերը բողոքեցին բուլղարական հյուպատոսա-

րանները առջև, դրանով արտահայտելով իրենց համերաշխութիւնը բուլղարական հակապատերազմական մարտիկներին հետ:

Լեհաստանի կարմիր ոգնութիւնը, վորն աշխատում է ընդհատակի և ուժեղ հալածանքների պայմաններում, մասսայական տիրաժողով թուրքիկ բաց թողեց բուլղարական զինվորների և նավաստիների դատաւարութեան դեմ:

Քաջարի հակաֆաշիստների և պատերազմի դեմ սլաքարող մարտիկների պաշտպանութեան կողմն ուղղված համերաշխութեան այդ միջազգային կամպանիայի շնորհիվ միայն մնացած ՏԷ դատավճիռները մինչեւ այժմ ի կատար չեն ածված: Բոլոր յերկրները աշխատավորներն առաջիկայում ևս աչալուրջ կերպով կհետեւեն և թուրք չեն տա ի կատար ածել դատավճիռները:

Հունական 22 կալանավոր նավաստիները գրում են այն մասին, ինչ գրում են պատերազմի դեմ մարտնչող հեղափոխական զինվորներն ու նավաստիները, վորոնք ստացել են կարմիր ոգնութեան աջակցութիւնը, համերաշխութեան միջազգային շարժման աջակցութիւնը:

«Մենք ծնողներ չունենք, բայց մենք դուստր աւելին— միջազգային կարմիր ոգնութիւնը, վորը մեզ այնպես է ոգնում, ինչպես մայրն է ոգնում ի՞ր դավակներին»:

Այս խոսքերը բոլոր յերկրները և աշխարհամասերի կարմիր ոգնութեան անխոնջ աշխատողների վարձատրութիւնն են հանդիսանում: Այս խոսքերը վկա-

յում են այն մասին, վոր կարմիր ոգնութեան անդամներն իրենց պարտքը կատարում են այն ճակատում, ուր նրանց դեմեղել է հակապատերազմական պայքարը, և այդ պայքարը կկատարեն առաջիկայում ևս:

## ԿԱՐՄԻ ՌԳՆՈՒՅՅՈՒՆԸ ՁԻՆԱՍՏԱՆՈՒՄ

Չնայած բոլոր դժվարութիւններին, Ձինական կարմիր ոգնութիւնը վոչ միայն Ձինաստանի խորհրդային շրջաններում, այլև նրա մնացած մասում բացառիկ աշխատանք է ծավալել պատերազմի զոհերին և հակաճապոնական շարժման մասնակիցներին ոգնելու ուղղութեամբ:

Ձինական կարմիր ոգնութեան անդամները Ձինաստանի խորհրդային մարզերում բոլոր ջանքերը լարում են, վորպեսզի ամբոցնեն Ձինական կարմիր բանակը, վորը հանդիսանում է խաղաղութեան բանակ, բոլոր ճնշվածների բարեկամը:

Ձինաստանի խորհրդային շրջաններում կարմիր ոգնութիւնը աշխատանք է տանում նաև անմիջաբար ռազմաճակատներում: Նա լայն մասսաներին կազմակերպում է վիրավոր մարտիկներին ոգնութիւն ցույց տալու համար: Նա միջոցների հանդանակութիւն է կատարում դեղորայք, հաղուտ և պարեն գնելու համար, վիրավորներին ոգնելու նպատակով բժիշկներին

խմբեր կազմակերպելու համար: Կարմիր ուղեության աշխատողների հատուկ խմբեր ձևկատ են մեկնում մարտնչող կարմիր բանակայիններին նվերներ և ծնողների մասին լուրեր տալու համար:

Թիկունքում Ձինական կարմիր ուղեությունը կազմակերպում է կարմիր բանակայինների և սպանված մարտիկների ընտանիքներին ունելու գործը, հողը մշակելու և այլ կարիքների խնդրում: Աշխատանքի այդ ձևատամասում իրենց ակտիվությամբ առանձնապես աչքի յեն ընկնում Միջազգային կարմիր ուղեության պատանի բարեկամները: Այսպես, որինակ, նրանք փայտ են հավաքում, բանող անասուններին են սրահում, մարտիկների, սպանված կարմիր բանակայինների և պարտիզանների յերեխաների մասին են հարում:

Իերենք մի քանի որինակ այն գործունեությունից, վոր ծավալել է կարմիր ուղեությունը Խորհրդային Ձինաստանում: Տունդու քաղաքում (Ցյանսիի նահանգ, Կիան դավառ) ղինվորական հիվանդանոցում պառկած էյին 800-ից ավելի ծանր վիրավորված կարմիր բանակայիններ և պարտիզաններ: Մի անգամ առավոտյան հայտնի դարձավ, վոր թչնամիներն ռժեղ հարձակում են պատրաստում քաղաքի վրա: Յեվ ահա Ձինական կարմիր ուղեությունն իր վրա վերցրեց քաղաքից այդ ութ հարյուր ծանր վիրավորված մարտիկներին դուրս բերելու գործը: Առավոտյան ժամը 8-ին կարմիր ուղեության աշխատողները ձեռնամուխ յեղան վիրավորներին փախադրելու, և ցերեկվա ժամը 2-ին բոլոր 800 հոգին էլ արդեն ապահով տեղումն

էյին դտնվում: Կարմիր ուղեությունը կարողացավ այնպես քողարկել վիրավորների փոխադրությունը, վոր սպիտակ գվարդիականները չիմացան նրանց տեղը: Իրենց տրամադրության տակ չունենալով վոչ մի ժամանակակից փոխադրական միջոց, կարմիր ուղեության անդամներն աչք հակայական աշխատանքը կատարեցին սեփական ձեռքերով ու ուսերով: Այստեղ էլ ակտիվ մասնակցություն ունեցան կարմիր ուղեության Պատանի Բարեկամները: Նրանց հանձնարարվեց հիվանդանոցի դեղորայքի և սարքավորման փոխադրությունը:

Ահա մի ուրիշ որինակ: Յերբ սպիտակ բանակը ներխուժեց Ցղյանսի նահանգը, այդ մարդի մոտ 20 հազար բնակիչները փախան Գանկինի արևմտյան ափը, վորպեսզի սպիտակ զեներայիների հրեշային անգլթությունների զոհը չդառնան: Կարմիր ուղեությունը փախստականներին պատերազմական դործողությունների թատերաբեմից վերցրեց իր պաշտպանության տակ: Նա փողի, սարենի և հագուստեղենի լայն հանդանուկություն կազմակերպեց փախստականների ոգտին, հատուկ խմբեր առանձնացրեց, վորոնք մըշտական կապ էյին պահպանում փախստականների հետ և մասսայական աշխատանք էյին կազմակերպում նրանց մեջ: Ի միջի այլոց, կարմիր ուղեությունը հատուկ ճամբար կազմակերպեց ծերունիների և յերեխաների համար՝ տալով ավելի լավ սնունդ: Նա փախստականներին ծղնոտ հայթայթեց կարմիր բանակայինների համար սանդղաներ դործելու նպատակով և ամեն կերպ աշխատեց բարձրացնել փախստականների

տրամադրութեանն ու պահպանեց նրանց արիութեամբը հակահեղափոխութեան դեմ պայքարելու համար: Այդպիսի աշխատանքի շնորհիվ շուտով հաջողից փախստականների մեջ ստեղծել լայլ զինված մարտիկների մի ջոկատ, վորը հետ խլեց կորցրած մարդը:

Սորհրդային Չինաստանում, Լուենցյան դեռի շրջանում (Գուանդունի նահանգ) 8—14 տարեկան յերեխաները հավաքեցին զնդակոծութունից հետո մընացած փամփռւշտներն ու պարկուճները և ավին խորհրդային ռազմական գործարանին: Նույն այդ մանկական խմբերը բոլոր ուժերը գործադրեցին, վորպեսզի անվտանգ տեղ ուղարկեն և հիվանդանոցները հասցնեն իրենց ճանապարհին հանդիպած ծանր վիրավոր կարմիր բանակայիններին: Վիրավոր կարմիր բանակայինների այն հարցին, թե «Ովքե՞ր եք դուք», յերեխաները հպարտութեամբ պատասխանում էին՝ «Մենք պիտոներենք ենք և միևնույն ժամանակ կարմիր ոգնութեան անդամներ»:

Ամենաանողոր հայրածանքների պայմաններում կարմիր ոգնութեանը Գոմինդանական Չինաստանում հերոսաբար ոգնում է հակաճապոնական շարժման հազարավոր հալածված վիրավոր մարտիկների: Հակաճապոնական մասսայական շարժման ձերբակալված հայտնի առաջնորդ Պան Հուն-Սենի և նրա ընտանիքի պաշտպանութեան համար ստեղծված եր իրավարանական կարիքտ: Ծանհայում կարմիր ոգնութեանը դըրամի, պարենի և հագուստեղենի հանդանակութեան կազմակերպեց հակաճապոնական ազատագրական

շարժման այն մասնակիցների ոգտին, վորոնք վտարված էյին Մանջուրիայից և փախել էյին հայրածանքներից: Կարմիր ոգնութեան յեւույթների շնորհիվ և մաստաների ճնշման ներքո քաղաքային ինքնավարութեանը Քեյպինում, Ծանհայում, Տյանցզինում և այլ քաղաքներում հարկադրված յեղալ այդ փախստականների համար ապահովել ապաստարան և լժշկական ոգնութեան: Փախստականների ոգտին կարմիր ոգնութեան կազմակերպած դըրամական հանդանակութեաններն անցկացան մեծ հաջողութեամբ:

Որ ըստ որե ամբողջ Չինաստանում ամբանում է ազատագրական հուժկու շարժումը ճապոնական իմպերիալիզմի դեմ, վորը ձգտում է ծառայադրել ու ստրկացնել չինական ժողովրդին: Այդ շարժումն ընդգրկում է բանվորներին, գյուղացիների և մեծ մասամբ ինտելիգենցիայի լայն մասսաներին:

Ծագում է առնում չինական ժողովրդի հակա-իմպերիալիստական լայն միասնական ճակատը, ընդհանուր հուժկու ժողովրդական շարժում ճապոնական իմպերիալիզմի դեմ, Չինաստանի փրկութեան համար:

Բայց Նանկինի կառավարութեան չինական բանակում էլ ամբանում է հակաիմպերիալիստական շարժումը: Գոմինդանականների խմբերն ավելի ու ավելի հաճախակի յեն պահանջում դադարեցնել պայքարը Չինական կարմիր բանակի դեմ և բոլոր ուժերն ուղղել ամբողջ չինական ժողովրդի թշնամու— ճապոնական իմպերիալիզմի դեմ: Ուհանում և Հանկուոյում պիմվորների մեջ մի քանի անգամ յերեւացել են հա-

կան ճապոնական լողուններով պատված պլակատներ: Մամուլը նշել է մի շարք դեպքեր, յերբ զորամասերը հրաժարվել են կարմիր բանակի դեմ դուրս գալ: Այսպես, որինակ, Գուլջիժոուլի բանակի 25-րդ կորպուսը զորամասերը այդ բանակի դեմ չէին զորամասերի հետ միասին (ընդամենը 20.000 հոգի) հրաժարվեցին կռվել կարմիր բանակի դեմ:

Ճապոնական իմպերիալիզմի հրամանով չինական իշխանութիւնները փորձում են այդ աղատագրական շարժումը ճնշել տեղորի ոգնութեամբ: Ձանազան քաղաքներում ուսանողների և աշխատավորների հակաճապոնական հուժկու ցույցերի ժամանակ շատ ցուցարարներ վիրավորվեցին և սպանվեցին: Հակաիմպերիալիստների և աղատագրական շարժման մարտիկների մեջ մասսայական ձերբակալութիւններ կատարվեցին:

Չինական ժողովրդի ազատագրական պայքարի դեմ ուղղված այդ սուր տեղորի շրջանում Չինական կարմիր ոգնութեան խնդիրները մեծանում են. նա աջակցութիւն է ցույց տալիս հակաիմպերիալիստական ազատագրական պայքարի բոլոր զոհերին:

Մենք կհիշեցնենք այն մեծ, մասսայական կամպանիայի մասին, վոր ծավալվեց «Սինչեն» ժուրնալի փակման և Գոմինդանական իշխանութեան կողմից նրա խմբադիր Դու Չուեն-Կուանի ձերբակալման առթիվ: Ժուրնալն արգելվել է նրա խմբադիրը մեղադրվել եր, ճապոնական իշխանութիւնների ցուցմունքով, ժուրնալում տպագրված մի հոդվածի համար, վորն ուղղված էր ճապոնական իմպերիալիստա-

կան դիչատիչների դեմ: Դատարանում Դու Չուեն-Կուանը համարձակորեն հայտարարեց. «Իմ ժուրնալը իբնեւ նպատակ է առաջադրում պայքարել իմպերիալիզմի դեմ, դիչատիչ քաղաքականութեան դեմ: Յեսինքս բնիկ հյուսիս-արևելյան նահանգներից եմ, վոր այժմ գրավել են ճապոնացիները: Ի՞նչպես կարող եմ չբողոքել և չպայքարել նվաճողների դեմ»:

Դատարանում ներկա յեղողներն այդ հայտարարութեանը պատասխանեցին հետևյալ բացականչութիւններով. «Կարչի՛ ճապոնական իմպերիալիզմը: Կորչեն չինական դավաճանները»: Դատարանի դահլիճում բաղմաթիվ հակաիմպերիալիստական թողուցիկներ տարածվեցին: Բողոքների հետևանքով դատարանը և ճապոնական հյուպատոսութեան ներկայացուցիչը ստիպված յեղան թողնել դահլիճը:

Դատավճռի ընդունումից հետո բողոքներ հնչեցին վոչ միայն Չինաստանում, այլև արտասահմանում: Բողոքի այդ շարժմանը միացան վոչ միայն աշխատավորական մասսաները, այլև այնպիսի կազմակերպութիւններ, ինչպես Շանհայի փաստաբանների միութիւնը, Շանհայի առևտրական պալատը: Ֆիլիպինյան կղզիների չինական առևտրական պալատը 2000 դուլար փոխադրեց Դու Չուեն-Կուանի կնոջ բանտը մթերք տանելու ծախսերի համար: Չինական վտարանդիներն Ամերիկայում, Հոլանդիայում և այլ յերկրներում չինական կառավարութեանն ուղարկեցին: տեղորիստական դատավճռի դեմ ուղղված բողոքի հեռագրեր:



Մասնայական շարժման ճնշման ներքո Գոմինդա-  
նի կառավարությունը հարկադրված յեղավ դերա-  
պույն դատարանի միջոցով հայտարարելու, թե «նախ-  
կին դատավճիռը սխալ էր, ուստի և վերացվում է»:  
Խմբադիրն ազատ արձակվեց:

Հակաճապոնական մարտիկներին, տեռորի զոհերին  
և նա համերաշխվելու վերաբերյալ կարմիր ուղեու-  
թյան աված լողուններն ավելի ու ավելի յեն դառ-  
նում ամբողջ չորս հարյուր միլիոնանոց չինական ժո-  
ղովրդի լողունները:

### Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱԲԵՇՍԱՆԻ ՎՐԱ ԿԱՏԱՐ- ՎԱԾ ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԶՈՂԵՐԻ

Փաշխտական Իտալիայի հարձակումը հարեչա-  
կան խաղաղ ժողովրդի վրա ամբողջ աշխարհում և  
հատկապես աշխատավորության մեջ վրդովմունքի ու  
զղվանքի ալիք առաջացրեց պատերազմի Փաշխտական  
հրձիղների հանդեպ: Մասսաները ցույցեր արին բոլոր  
խաղաղական հյուպատոսարանների ու դեսպանատնե-  
րի առջև Լոնդոնում, Փարիզում, Ռոտերդամում,  
Կոպենհագենում, Պրադայում, Նյու-Յորքում, Շան-  
հայում: Շատ յերկրներ՝ Հունաստանի, Ֆրանսիայի,  
Անգլիայի, ԱՄՆ-ի և Հարավային Աֆրիկայի նախա-  
տինները հրաժարվեցին իտալական նավերը բարձելուց  
և Իտալիա ուղղամթերք ուղարկելուց:

Սկսված պատերազմի մասին առաջին խսկ լուրերն  
ստանալիս՝ Միջազգային կարմիր ուղեության սեկցիա-

ներն սկսեցին կոչ անել ուղեության դալու պատերազ-  
մի զոհերին: Կարմիր ուղեության իտալական, Ֆրան-  
սիական, բելգիական և զվիցերիական սեկցիաներն ան-  
միջապես մի կոչով դիմեցին հասարակայնությանը և  
կազմակերպեցին հուժկու մի շարժում Փաշխտական  
հարձակման զոհերին ուղեելու ուղղությամբ:

Կարմիր ուղեության ավստրիական սեկցիան, վորն  
աշխատում է անլեզու պայմաններում, հետապնդում-  
ներին և տեռորի պայմաններում, իտալական զորքերը  
Հաբեչստան մտնելուց անմիջապես հետո բաց թողեց  
Ավստրիայի աշխատավորներին ուղղված մի կոչ  
30-000 որինակից: Նա դիմեց Ավստրիայի աշխատավոր  
ժողովրդին և կոչ արավ համերաշխելու Իտալիայի և  
Հաբեչստանի պատերազմի զոհերի հետ: Այդ կոչի մեջ  
առանձնապես ընդգծվում էր, վոր «ավստրիական ժո-  
ղովրդի ստրկացումն ու իրավազրկումը տեղի յեն ու-  
նենում նույն Մուսոլինիի պաշտպանության ներքո,  
վորն այժմ դեպի սպանդ է քշում իտալական բան-  
վորներին և դժուղացիներին»:

Այդ կոչի մեջ, վորին հավանություններ և խանդա-  
վառություններ դիմավորեց Ավստրիայի աշխատավոր  
նազարնակչությունը, առանձնապես ընդգծվում էր  
Ավստրիայում մղվող ազատագրական պայքարի կապի  
խաղաղական ժողովրդի ազատագրական պայքարի  
հետ:

Այսպիսով, Ավստրիայի կարմիր ուղեությունը  
կարողացավ Հաբեչստանում մղվող պատերազմի դեմ  
ուղղված պայքարը շաղկապել իր սեփական յերկրում  
ծավալված համերաշխության շարժման հետ:

Հազարավոր իտալացիներ փախան Յուզասլավիա, վորպեսզի պղտովեն Հարեչտանում մեռնելուց և ուղղական տեղորի հետապնդումներից: Այդտեղ կարմիր ոգնությունը, վորը նույնպես անլեզալ է, անմիջապես մորիլիղացիայի յենթարկեց բոլոր ուժերը, վորպեսզի թույլ չտա իտալիային հանձնելու իտալացի փախստականներին:

Հունաստանի կարմիր ոգնությունը Հարեչտանի վրա կատարված Փաշխատական հարձակման առաջին լիակ որերին պատերազմի դեմ ուղղված տասնյակ հազարավոր թուղցիկներ տարածեց աշխատավորական մասսաների և ամենից առաջ նավաստիների մեջ: Նրա գործունեությունը պետք է վերադրել այն փաստը, վոր շատ հունական նավերի անձնակազմը հրաժարվեց ռազմամթերք վոխադրել իտալիա կամ Արևելյան Աֆրիկա: Պաղբասում կարմիր ոգնության աշխատավորները հակապատերազմական թղուցիկներ բաժանեցին նավահանգիստ յեկած իտալական և գերմանական նավերի նավաստիներին: Վերջի վերջո գործն այնտեղ հասավ, վոր հակապատերազմական հզոր ցույց ըսկրավեց այդ նավերի վրա: Իտալական և գերմանական նավաստիները Հունաստանի աշխատավորության հեռձեռք-ձեռքի ցույց արին իտալական և միջազգային Փաշիզմի դեմ: Նորից և նորից հունարեն, իտալերեն և գերմաներեն լեզուներով բացականչություններ հրչեցին՝ «Կորչի՛ Փաշիզմը: Կորչի՛ պատերազմը Հարեչտանում»:

ԱՄՆ-ում ստեղծված էր Հարեչտանի պաշտպանության միացյալ կոմիտե: Հարեչտանին ոգնելու

գործում առանձին ակտիվություն զարգացրին նեղրական կազմակերպությունները: Դեղորայք և բուժարաններ ուղարկեցին Հարեչտան: Հանդանակությունը հենց միայն մի ժողովում տվեց 305 դոլլար: Հոլանդիայում և Կանադայում հրատարակվեցին հատուկ բացիկներ պատերազմի զոհերի ուղտին: Արգենտինայում ստեղծվեց ոգնության հատուկ կոմիտե:

Միջազգային կարմիր ոգնության Փրանսիական սեկցիան, կարմիր ոգնության գործադիր կոմիտեյի վորոշումների վորով գործելով, մեծ ակտիվություն ծավալեց Հարեչտանի ուղտին:

Անգլիայից Հարեչտան ուղարկվեց սանիտարական մի ողանավ: Անգլիացի կանայք Արևելյան Աֆրիկա պատերազմական գործողությունների դաշտն ուղարկեցին անգլիացի դիտության ջուլյերի մի ջուկատ: Այդ նպատակով կատարված հանդանակությունը կարճ ժամանակամիջոցում տվեց 100.000 Փրանկ:

Կարմիր ոգնության նախաձեռնությունը պետք է վերադրել այն բանը, վոր Փրանսիայի հասարակական կյանքում հայտնի մի ամբողջ շարք գործիչներ վորոշեցին ստեղծել «Հարեչական պատերազմի զոհերին ոգնող կոմիտե»: «Յեյրոպական ոգնության» նախագահ Մադլինա Բրաունը, «Յերեսաների իրավունքների պաշտպանության լիգայի» գլխավոր քարտուղար Յելենա Գոսսեն, մինիստր Պիեր Կոտը, հայտնի գիտնական պրոֆեսոր Լանժելենը, «Փրանսիայի ինստիտուտի» (Փրանսիայի բարձրագույն գիտական ինստիտուտի) անդամ սոցիալիստ փաստաբան Ժան Լոնգեն և շատ ուրիշներ հասարակայնությունը կոչ արին

ստեղծել ողնուլթյան այդ կոմիտեն. այդ կոմիտեն իրեն խնդիր առաջադրեց ողնուլթյուն ցույց տալ վիրավորներին, սանիտարական նյութեր հավաքել, շեֆուլթյուն ստեղծել պատերազմի բաղձաթիվ վերբերել նկատմամբ: Հարեչատանին ողնելու շարժումը ամենալայն միասնական ճակատի բնույթ եր կրում:

Իր աշխատանքի առաջին իսկ օրերին այդ կոմիտեն բաց թողեց 50,000 բացիկ և 100,000 կրճաքներ, վորոնց վաճառքից դոսացած դումարը դործածվեց Հարեչատանում մղվող պատերազմի զոհերին ոգնելու համար: Փողոցային միտինգներ անցկացվեցին: Ազգաբնակչութան ամենալայն շրջանները խանդավառությամբ վողջունեցին ողնուլթյան կոմիտեյի դործունեյությունը:

Համերաշխության շարժումը համակեց նաև յերեխաներին: Յերբ առաջին անգամ լուր ստացվեց այն մասին, վոր Փաշխտական ոմբաձիգները սպանել ելին հարեչ յերեխաներին, Փրանսիական յերեխաների պատվիրակությունը բողոքով հանդես յեկավ իտալական Տյուպատոսարանի առաջ և իր համակրությունը հայտնեց Հարեչատանի ներկայացուցչին:

Պատերազմի և Փաշիզմի դեմ պայքարող կանանց համաշխարհային կոմիտեն Հարեչատան ուղարկեց դեղորայքով, հականեխիչ և վիրակապային նյութերով բարձած «խաղաղության ինքնաթիռ»: Հարեչատանին ողնող կոմիտեն Հարեչատան ուղարկեց մի բուժարան 16 մահճակալով, սանիտարական սարքավորումով և անձնակազմով:

Տասնյակ հազարավոր մարդիկ ընկան Արեւելյան Աֆրիկայում պատերազմական գործողությունների դաշտում, այդ թվում վոչ միայն զինվորներ, այլև բաղաքացիական բնակչություն— տղամարդիկ, կանայք, յերեխաներ: Այդ մաստը պատերազմի զոհերին ողնող կոմիտեյին դրդեց հրավիրել Հարեչատանում մղվող Փաշխտական պատերազմի զոհերի ողնության յեվրոպական կոնֆերանս:

Յրանսիայի, Հոլանդիայի, Սկանդինավիայի, Իսպանիայի 100-ից ավելի պատգամավորները, դերմանական և իտալական հակաֆաշիստների ներկայացուցչիչները, Հարեչատանի, Հաիթիի, Տյուսիս-ամերիկյան նեդերերի և գաղութային ժողովուրդների ներկայացուցչիչները, ամեն ուղղության կազմակերպությունների և կուսակցությունների ներկայացուցչիչները— կոմունիստներ, սոցիալիստներ, դեմոկրատներ, պացիֆիստներ և այլն,— 1936 թվի մարտի 29—30-ին իրար հանդիպեցին Փարիզում «Մեզն դե լա շիմի»-ում («Քիմիայի տանը»), վորպեսզի քըննարկեն պատերազմի զոհերի ողտին աշխատելու միջոցներն ու ուղիները: Այն մասին, թե ինչպիսի մեծ հետաքրքրություն առաջացրեց այդ հավաքույթն ամբողջ աշխարհում, վկայում են շատ կազմակերպություններից և անձնավորություններից կոնֆերանսի ստացած դիմումները: Յրանսիական պարլամենտի արտաքին դործոց կոմիտեյի վոխ-Նախագահը, դրող ժան Ռիշար Բլոկը, Կարլ քաղաքի քաղաքապետը, Մոնրուժի քաղաքապետը, Փրկության բանակը, լորդ Սեսիլը, Ազգերի Լիգայի բարեկամների անդլիական

լիզան, արհեստակցական կազմակերպությանները միջազգային միության քարտուղարը և շատ ուրիշներ վողջույնի նամակներ ուղարկեցին:

Այդ կոնֆերանսում կարմիր ոգնությունից վորպես ներկայացուցիչ հանդես յեկավ ընկ. Շովեն: Նա խոսեց այն մասին, վոր պետք է ոգնել նաև Իտալիայի հակաֆաշիստներին, վորոնք Հյուժվում են բանտերում պառերազմի դեմ պայքարած լինելու համար:

## ԿԱՐՄԻ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄԻԱԶԳԱՅԻՆ ՀԱԿԱՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՈՐԸ

Այն ժամանակվանից, յերբ ոգոստոսի 1-ի որը պատերազմի դեմ պայքարելու միջազգային որ հայտարարվեց, բոլոր յերկրների կարմիր ոգնությունն իրեն խնդիր առաջադրեց այդ որը բոլոր միտինդներում, ժողովներում և ցույցերում սպիտակ տետրի զոհերի հետ համերաշխության և Խորհրդային Միության պաշտպանության կոչ անել: Հաճախ կարմիր ոգնության խմբերն իրենց վրա ելին վերցնում նախաձեռնությունը, և այնտեղ, ուր հակապատերազմական շարժումը թույլ էր, իրենք էլն ոգոստոսի 1-ին հակապատերազմական ցույցեր կազմակերպում: 1934—35 թվականները ոգոստոսի 1-ը կարմիր ոգնության բազմաթիվ սեկցիաներն անցկացրին ընկ. Թելմանի ազատության համար պայքարելու նշանաբանով:

Իերենք միջազգային հակապատերազմական որվա անցկացման մի քանի որինակներ:

Զվիցերիայի մի փոքրիկ գյուղում, Բեռնի մոտ, կարմիր ոգնության աշխատողները մեկ ողապարիկ սարքեցին, վորի վրա կար հեռեկալ կարմրալույս մակազրությունը. «Ընդդեմ իմպերիալիստական պատերազմի, հանուն Թելմանի ազատության»: Յերեկոյան նրանք այդ ողապարիկը բաց թողին ազգային տոնի առթիվ գումարված հայրենասիրական ժողովի գըլխավերևում (Զվիցերիայում ոգոստոսի 1-ը ազգային տոնի որ է): Վինտերգուրում (մի ավան է Զվիցերիայում, ուր գերակշռում են մետաղամշակման արդյունաբերությունը և ռազմամթերքի արտադրությունը) կարմիր ոգնության աշխատողները պատրաստեցին պատերազմի դեմ ուղղված և Խորհրդային Միության պաշտպանության լողուններ կրող հաղարավոր թրուուցիկներ և ավտոմոբիլի ու հեծանիվի ուժեղ շարժման ժամերին տարածեցին փողոցներում: Կարմիր ոգնության հոլանդական սեկցիայի աշխատողներն ոգոստոսի 1-ին դեպի Գերմանիա տանող խճուղիների վրա ներկերով դրեցին պատերազմի Փաշիստական հրձիգների դեմ, ընկ. ընկ. Թելմանի, Մերենդորֆի ու Ոսեցկու ազատության և Խորհրդային Միության պաշտպանության վերաբերյալ լողուններ:

Լիտվայում կարմիր ոգնության աշխատողներն աղավիններ բաց թողին փոքրիկ դրոշակներով, վորոնց վրա պարզ կերպով կարելի յեր կարդալ հետևյալ մակազրությունը. «Պաշտպանեցեք Խորհրդային Միությունը»:

Լեհաստանում ազոստոսի 1-ի որը կարմիր ոգնության ակտիվիստները հեռադրաթելերի վրա կախեցին՝ հակապատերազմական լռողներ կրող մեծ տրանսպարանտներ: Լողունները տակ գանգ եր նըկարված և ապա գալիս եր հետեյալ մակադրությունը. «Ուշադրություն: Ուժեղ լարման հոսանք: Կյանքի համար վտանգավոր ե»: Այդպիսի ճանապարհով նրանք մի քանի ժամով ուշացրին տրանսպարանտների հանձնումը, սպառնալի մակադրությամբ դանդը վախեցնում եր վոստիկաններին:



Նոր համաշխարհային պատերազմի վերահաս ըսպանալիքը, հիտլերյան Փաշիզմի զավթողական պլանները, ճապոնական զինվորականության պլանները պետք ե սրեն բոլոր յերկրների աշխատավորների ըզպատությունը:

1937 թվի ազոստոսի 1-ի հակապատերազմական որը պետք ե անցկենա Փաշիզմի և նոր համաշխարհային պատերազմի վտանգի դեմ մղվող պայքարում բոլոր յերկրները աշխատավորները միասնական ճակատ կազմելու նշանաբանով: Բոլոր յերկրների աշխատավորական մասսաները միասնական լայն ճակատով դեմ գուրս կգան պատերազմի Փաշիստական հրձիգներին և ի պաշտպանության խորհրդային Միության:

## ԲՈԼՈՐ ՈՒժԵՐՆ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ

Միջազգային կարմիր ոգնության արտասահմանյան սեկցիաները բոլոր յեւրոյթներում և կամպանիաներում նորից և նորից ծագում ե մասսաների կողմից խանդավառությամբ զիմավորվող լողունը՝ «Պաշտպանեցե՛ք խորհրդային Միությունը»: Վորովհետև կարմիր ոգնության աշխատողներին կապիտալի յերկրներում հայտնի յե, վոր խորհրդային իշխանությունն իր գոյության առաջին իսկ որվանից պարզորոշ ու աներկմիտ կերպով խաղաղության քաղաքականության ե հետապնդում: Խորհրդային իշխանությունը լիկվիդացիայի յե յենթարկել ստրկացման ցարական դադության քաղաքականությունը:

Խորհրդային Միության խաղաղության քաղաքականությունն ունեցել ե և առաջել ևս ունի վճռական նշանակություն ընդհանուր խաղաղության պահպանման համար: Խորհրդային Միության քաղաքականությունը, ժողովուրդների մեծ առաջնորդ Ստալինի հանձարեղ քաղաքականությունը, համաշխարհային պրոլետարիատի պայքարը Կոմինտերնի ղեկավարությամբ՝ խոչընդոտ են հանդիսանում համաշխարհային իմպերիալիստական նոր հրդեհին:

Կարմիր ոգնության աշխատողներին հայտնի յե, վոր Խորհրդային Միությունը սոցիալիզմի յերկրն

ե, միակ յերկիրն և աշխարհումս, ուր ժողովրդի բարեկեցությունն աճում է որ ըստ որե, ուր մարդիկ յերջանիկ են, ուր գործադրկությունը և աղքատությունը մոռացված են, ուր մարդկանց զլսին յերբեք չի տեղում բուրժուազիայի և նրա Փաշխտական սպասավորների սպիտակ տեւորը:

Սոցիալիզմի այդ յերկիրը նրանք պաշտպանում են Սորհրդային Միության պրոլետարների և աշխատավորների հետ կողք-կողքի, յերկրագնդիս պատերազմի գլխավոր հրձիգները՝ հիտլերյան Գերմանիայի և Ճապոնիայի պրոֆուկացիայի դեմ:

Ամբողջ աշխարհի կարմիր ոգնության աշխատողներին և բոլոր աշխատավորներին հայտնի յե, վոր Սորհրդային Միությունը համաշխարհային սոցիալիզմի և համաշխարհային համերաշխության ամբոցն է, այդտեղ և սպաստարանն ու հենարանը բոլոր հալածվող հեղափոխականների և հակաֆաշիստների համար, սպիտակ տեւորի հարվածի տակ ընկած բոլոր հակապատերազմական մարտիկների համար:

Այն ճշմարտությունը, վոր Սորհրդային Միությունը հանդիսանում է բոլոր յերկրների աշխատավորների հայրենիքը, ավելի ու ավելի խանդավառ հավանության է հանդիպում ամբողջ աշխարհի միլիոնավոր մասսաների կողմից: Աշխատավորները կապիտալի բոլոր յերկրներում այելի լավ են ճանաչում Սորհրդային Միության թշնամիներին և իրենց սեփական մահացու թշնամիներին՝ պատերազմի գերմանական և ճապոնական հրձիգներին: Ամեն մի հարձակում սոցիալիստական հայրենիքի վրա միևնույն ժամանակ

հարձակում է նրանց վրա, նրանց սեփական շահերի վրա: Դրա համար ել նրանք վողջունում են հերոսական, անպարտելի Կարմիր Բանակին, խաղաղության բանակին, վեր կանգնած է սոցիալիստական հայրենիքի սահմանադրին, համաշխարհային սոցիալիզմի դործի պաշտպանության դիրքերում:

Կապիտալիստական բանտերում վո՛չ փորձությունները և վո՛չ ել խոշտանդումները չեն կարող հուսահատության հասցնել կալանավոր հեղափոխականներին, վորովհետև նրանք գիտեն, վոր ուսական բալչեիկները նույնպես տառապել են բանտերում և աքսորում ցարիզմի մտրակի տակ, բայց ցարական տեւորը չկարողացավ խոչընդոտ հանդիսանալ նրանց հաղթանակին:

Բուլչեիկյան կուսակցությունը և խորհրդային իշխանությունն ամբողջ ազդաբնակչությանը դաստիարակում են բոլոր աշխատավորների միջազգային համերաշխության վողգով: Այդ ինտերնացիոնալիզմը յերեւման է գալիս և՛ Ալստրիայի փետրվարյան մարտերի զոհերի նկատմամբ հոյակապ համերաշխության մեջ, յերբ մի քանի որում նրանց համար հավաքվեց 1 միլիոն շիլինգ, և՛ իսպանական հակաֆաշիստների նկատմամբ համերաշխության յելույթում, յերբ Սորհրդային յերկրի աշխատավորները մի քանի որում հավաքեցին 2.500.000 Փրանկ. այն յերևան է գալիս և՛ ընկ. ընկ. Թեյմանի ու Ռակոչիի պաշտպանության համար կազմակերպված յելույթներում, և՛ Փաշիզմի զոհերի ադտին կոլտեստություններում մոպրական հեկտարները մշակելիս, և՛ կապիտալի կալանավոր-

ներքի վրա շեփություն վերցնելու աշխատանքում . այն այժմ յերևան և գալիս նաև սպիտակ տեռորի շնորհիվ վորբացած յերեխաների համար ինտերնացիոնալ մանկատներ կառուցելիս :

Սորհրդային յերկրի աշխատավորները համերաշխությունը սպիտակ տեռորի կողմից հետապնդվող հակաֆաշիստները և նրանց ընտանիքները հետ, մեծ հողածուլթյունը կապիտալի յերկրները յեկած քաղաքական վտարանդիների մասին, վերոնք Սորհրդային Միութեան մեջ իսկական ազաստան են դռնում և իրավահավասար յեղբայրներ են հանդիսանում, ՄՈՊՐ-ի՝ միջազգային համերաշխութեան այդ միլիոնանոց կազմակերպութեան գործունեութեանը հազութական Սորհրդային յերկրում, — այս բոլորը ցույց են տալիս, վոր Սորհրդային Միութեան ազգաբնակչութեանը գործնականում կատարում և ընկեր Ստալինի հետեյալ ցուցումը .

«Մինչև վերջը հավատարիմ լինել պրոլետարական ինտերնացիոնալիզմի գործին, բոլոր յերկրների պրոլետարների յեղբայրական դաշինքի գործին» :



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Պատերազմի պատրաստումը և սպիտակ տեռորը . . . . .	3
Սպիտակ տեռորը պատերազմի պատրաստութեան միջոց և . . . . .	10
Միջազգային կարմիր ոգնութեանը պատերազմի դեմ մղվող պայքարում . . . . .	20
Կարմիր ոգնութեանը և աշխատավորների մշտնական ճակատը ընդդեմ պատերազմի և ֆաշիզմի . . . . .	22
Միջազգային կարմիր ոգնութեան աշխատանքն առանձին յերկրներում . . . . .	31
Կարմիր ոգնութեանը Չինաստանում . . . . .	37
Ի պաշտպանութեան Հարբյուստանի վրա կատարւած ֆաշիստական հարձակման դոհերի . . . . .	44
Կարմիր ոգնութեանը և միջազգային հակապատերազմական ոլը . . . . .	50
Բոլոր ուժերն ի պաշտպանութեան Սորհրդային Միութեան . . . . .	53

4074.

Պատ. խմբագրի՝ Ս. Շահինյան  
Տեխ. խմբագրի՝ Ի. Վարդանյան  
Սրբագրիչ՝ Ս. Շահբաղյան

Կլավկտի լրագրի № 9221 Պատվեր 855. Հրատ. 4131 Տիրած  
3000. Թուղթի 72x105. Տպագր. 13/4. մ. Մեկ մամուլում 51 200  
նիշ. 21/4մ. Հեղինակի մամ.

Պետրառի ասպրան, Յերեան, Լենինի փող. № 65



«Ազգային գրադարան»



NL0202226



487

ԳԻՆԸ 75 ԿՈՊ.

Г. Грюнвальд  
**М О П Р**  
в борьбе против войны  
Гиз Арм. ССР, Ереван, 1937 г.